№ 283 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27 № 283

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ **1907** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ

Թիֆլիսի կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը յայտարարում է, որ կրկին ստացված է

„ԳԵՂՈՒՆԻ“

Զուտ արդիւնքը յատկացրված է յօգուտ հայ տառապեալների: Ցանկացողները ստանալ այդ պատկերազարդ և չքեղ հատորը, որ գանձեան ամենալաւ զարդն է և գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում, և մօտեցող տօների առիթով լաւագոյն նուէր կարող է հանդիսանալ, թող շտապեն ուղարկել 4 ր. և ճանապարհածախսի համար 40 կ., ընդամենը 4 ր. 40 կոպ., «Մշակի» խմբագրատունը, «Գուտտենբերգ» գրավաճառանոցը և կամ «Երկիր» լրագրի խմբագրատունը: 3—10

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որը երեքմսեայ լոյս կը տեսնի «Հայելիի յաւելուած» անուան տակ:

Տարեկան բաժանորդները կը ստանան՝
1) 50 № «Հայելի»:
2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբօմ կը կազմեն:
3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (50×60 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին):
4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.:
5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկար:

Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր:

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 ռուբ.: կէս տարին՝ 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կոպ.: Երեք ամիսը՝ 1 ր., դուրսը 1 ր. 25 կ.: Արտասահման տարեկան 6 ռուբլի, կէս տարին 3 ռուբլի:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Ճէպէճեան

(ա. օ.) առ. 8—10

ԲԱՑՎԱԾ Է ՆԱԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ԽԱԹԱԲԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

	Թիֆլիսում	Ուրիշ տեղեր՝
Տարեկան գինն է՝	4 ր.	5 ր.:
կէս տարվայ	2 ր.	2 ր. 50 կ.
3 ամսվայ	1 ր.	1 ր. 25 կ.
1 ամսվայ	— 40 կ.	— 50 կ.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի տարեկան բաժանորդները 1907 թւին, բացի 50 № թերթից ձրի ստանալու են. 1) գունաւոր ՏԱԽՏԱԿ-ՕՐԱՑՈՅՑ, 2) մեծադիր խիստ չքեղ պատկեր՝ զանազան գոյներով տպված, 11×8 վերշոկ մեծութեամբ, որ ծառայելու է որպէս պատից կախելու ԶԱՐԴ—ՊԱՏԿԵՐ և 3) մի «ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», մօտ 200 մեծադիր երեսներից բաղկացած, ուր մտնելու են եւրոպական և ռուսական նոր երգիծաբանական գրողների լաւագոյն գրուածքներից նմուշներ:

Ընդունում ենք ամեն լեզուներով յայտարարութիւններ:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Хатабала».

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

(ու. կ. ե.) առ. 14—20

ԲԺԻՇԿ
Գ. Պապովեան
ՄԱՍՆԱԳԷՏ
քթի, կոկորդի եւ ականջի
հիւանդութիւնների

Ընդունում է { ցեր. 1—2 ժ. ամեն օր բացի ուրբաթ; երեկ. 5—7 ժ. }

Միխայլովսկի պրօսպ., տ. Ֆօրբերի № 11.

(Կ. Չ.) առ. 15—60

ԲԺԻՇԿ
Տ. Ա. Խախանեան
ՄԱՍՆԱԳԷՏ
ներքին եւ վեներական
հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ.; երեկոյեան 5—7 ժ. }

Սօլօլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդօնովի տանը:

առ. (Հ.ու.Չ.) 25—100

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ՆԵՐՔԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալեքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՌՈՒԴԵՆԿՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.
Բժ. Ֆ. Վ. ՋՈՒԴՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.
Բժ. Մ. Ի. ԽԱՆՋԵՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, չորեքշ., ուրբ. 2—3 ժ., երեքշ., կիր. 3—4 ժ.:
Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., միզասեռ. երկ., հինգ., շաբ. և կիր. 2—3 ժ.
Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բկի և ականջի, երկ. չրեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.
Բժ. Վ. Գ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիպնօզով ամենայն օր 4—5 ժ.
Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՃԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.
Բժ. Ա. Տ. ՌՕԶՄԱՐԻՍԿԻ.—Երեխ., երկ., չորեք. 4—5 ժ., երեք. շաբ. 3—4 ժ.:
Բժ. Ն. Ի. ՆԷՈՒՑՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ. շաբ., 11—12 ժ.
Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., երեքշ., չորեք., ուրբ., շաբ., կիր. 2—3 ժ.:
Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—5 ժ. ամենայն օր.
Բժ. Կ. Մ. ՊԻՎԱՐՍԿԻ, Բժ. Կ. Ի. ՋՈՒԴՆՕՎՍԿԻ } կլինիքական անալիզ
Բժ. Գ. Իւ. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմն. մասսաժ, էլեկտր. 4—6 ժամ.
Մ. Ե. ԳՕՐՕԳՑԵՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.
Ս. ԽԱ. ՊԱՒԼՕՎՍԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Բժշկական խորհուրդներ, մասսաժ, սրսկել, անզգամահատել, անալիզի ենթարկել, հիպնօզել, սանատօրների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան:

առ. (ա. օ.) 32—144

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Նիկոլաեվսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԷԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռա- [illegible]
Ի. Ն. ԵՆԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—Ջղային, ներքին հ. և էլէկտրօբուժութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. Ներքին և երեխայոց հ:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ս. Ա. ԼԻՒԻՐ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի հ:
Մ. Գ. ԿԻՄՕՆՑ.—1—2 ժ. վիրաբուժական հ.,
Գ. Ճ. ԲԷՑԵՐ.—1—2 ժ. երեխայոց և Ներքին հ.:
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՕՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն:

Հիւանդանոցում բժշկումն հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և [illegible] ընտրողութիւն:

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին համարներից:

(օ. մ.) առ. Ե. Հ. Կ. 6—100

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻՉ“

հումոր, սատիրիկ-սիմվօլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

V-րդ համարը,

որը և ուղարկվեց բաժանորդներին նաև

„ԱՆԻ“

հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կոպ.:

Բաժանորդներին ուղարկվեց ձրի իբրև «Սափրիչի» I պրէմիան:

Տարեկան բաժանորդագինն է պրէմիայով 2 ռուբլի, իսկ Անդրկասպեան երկրի և արտասահմանի համար 2 ռուբլի 50 կոպ.:

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46, 18.

«ՍԱՓՐԻՉ»-ի խմբագրութիւն

Ե. Չ. առ. 21—25

Բագուի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը

յանձն է առնում տպագրել՝

1) Անպայման գեղարուեստական արժէք ունեցող հեղինակութիւններ, ինքնուրոյն և թարգմանական:

2) Անպայման գիտնական արժէք ունեցող հեղինակութիւններ, հասարակական, պատմական և բնական գիտութիւններին վերաբերեալ:

Թէ ինքնուրոյն և թէ թարգմանական հեղինակութիւնների նիւթը պէտք է լինի մատչելի և հետաքրքրական ժողովրդի լայն խաւերի համար, իսկ լեզուն՝ կանոնաւոր, կոկ և գեղեցիկ:

Հեղինակները և թարգմանիչները կը ստանան վարձ:

Աւելի մանրամասն պայմանները իմանալու համար դիմել՝ Баку, Совѣтъ съѣзда нефтепромышленниковъ, Е. Тагіаносянъ.

(ու. ե.) առ. 5—5

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԻ

ուրբաթ օրվայ հերթական jour fixe-ի ՉՐՈՑԸ «ԱՂԲԻՒՐՆ» է.

Թիֆլիսում գտնվող «Աղբիւրի և Տարազի» աշխատակիցներն ու Թղթակիցները այսու հրաւիրվում են ՈՒՐԲԱԹ երեկոյեան 6½ ժ. շնորհ բերել մասնակցելու զրոյցին:

Երաժշտական մասի սկիզբը 7 ժ.

1—1

Եւլախի կայարանում գտնվող

ԳՐ. ՅՈՎՀ. ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆՑԻ

կոմիսիօներական գրասենեակը և ապրանքների պահեստատեղը, որոնք անցեալ տարի Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ Թալանվեցին (ապրանքը գրասենեակի տիրոջ սեփականութիւն էր):

ՅՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ

ՎԵՐԱԲԱՑՎՈՒՄ Է:

(ա. օ.) 3—5

„ԱՇԽԱՏԱՆՔ“

Շաբաթաթերթին

Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է բացի խմբագրատնից՝ Бебутовская, № 56. նաև հետևեալ տեղերում՝

1) «Աշխատանքի» գրասենեակում, Дворцов. ул. д. Груз. Двор. № «Թաթարալյի» խմբագրութեան կից:
2) «Гуттенбергъ» գրավաճառանոցում:
3) պ. Մատինեանի «Փարոս» կիօսկում, Երևանեան հրապարակի վրա:

Տարեկան բաժնեգինն է 4 ռուբլի:

առ. 3—6

ԼԱՒԱԳՈՅՆ ՏՕՆԱԿԱՆ ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

„ՀԱՍԿԵՐ“

մանկական պատկերազարդ ամսագրի

1907 Թ. տարեկան բաժանորդագինն է 4 ր., առանց մանկավարժական բաժնի 3 ր.:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аскеръ», Бебутов. 25.

առ. 2—8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կուլտուրական փորձեր. Վերջին տեղեկութիւն. Զեկուցումն գարնան կարիքների համար. Մամուլ. Սովեալներին հաց մատակարարելու հարցը. Խլրտումներ Շուշու Թեմական դպրոցում. Կառավարչական փաստեր և լուրեր. Պետական Դումայի ընտրութիւնների շուրջը. Մոսկվայի ազնուականութեան ժողովը. Նամակ Ախալքալաքից: Թատրոն և երաժշտութիւն. Տեղեկութիւններ գաւառից. Դիմումն հայ հասարակութեան: Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

I

Ցաւ ու հոգս շատացել է ամեն տեղ: Իւրաքանչիւր տեղ ունի իր առանձնայատուկ կարիքների կուտակումը, որի վերաբերմամբ նա մտատանջվում է: Բայց անշուշտ կան այդ կարիքների մէջ շատերը, որոնք ընդհանուր են, որոնք յատուկ են նաև ուրիշ տեղերին:

Եթէ այդ կարիքների համար մենք գտնենք բաւարարութիւն այս ու այն կէտում, դրանով նպաստած կը լինենք և այն բոլոր տեղերին, ուր որ գործում են նոյն կարիքները:

Ուստի իւրաքանչիւր կուլտուրական գործ, բացի տեղական հետաքրքրութիւնից, ստանում է նաև աւելի ընդարձակ և նոյնիսկ ընդհանուր նշանակութիւն:

Այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով ցանկալի է, որ մեր տեղական գործողները ուշի ուշով հետևէին այն բոլոր կուլտուրական փորձերին, որոնք կատարվում էին մեր երկրի զանազան տեղերում, և իրար աջակցէին փոխադարձ օգնութեան գալու միմեանց:

II

Ճիշդ է, մեզանում կուլտուրական փորձեր դեռ քիչ են կատարված, բայց կան որոշ թւով զանազան շրջաններում, երբեմն նոյնիսկ խուլ անկիւններում:

Ժամանակ է, որ մենք սկսէինք հաշիւ տալ մեզ այն բոլոր փորձերի մասին, որ գոյութիւն ունեն մեր երկրում, և հանէինք նրանցից մի շարք եզրակացութիւններ, որոնք իբրև ցուցումներ ծառայէին մեր կուլտուրական գործունէութիւնների համար:

Մեր երկրում կատարված փորձերը պէտք է ուսումնասիրվեն ոչ միայն այն կէտերում, ուր ապրում է հայ ազգաբնակութիւնը, այլև այն տեղերում, ուր ապրում են մեր բոլոր հարևանները՝ Թուրքը, վրացին, ռուսը, գերմանացին, որովհետև այն պայմանները, որոնց մէջ նրանք ապրում են, նման են կամ նոյնն են, ինչ որ յատուկ են հայ ազգաբնակութեան:

III

Մեր հայկական փորձերը կարող են օգտաւէտ լինել մեր հարևանների համար, իսկ նրանց փորձերը մեզ համար: Երկրի մէջ ապրող բոլոր ցեղերը պէտք է միմեանց օգնեն իրանց կուլտուրական առաջադիմութիւններով, որպէսզի թէ օգնեն իրանց և թէ ընդհանրապէս բոլորին:

Իսկական առաջադիմութիւնը միայն այն ժամանակը կը լինի ամուր և բեղմնաւոր, երբ երկրի մէջ ապրող ամբողջ ժողովուրդը առանց ցեղական և կրօնական խտրութիւնների կը նպաստէ քաղաքակրթութեան և առաջադիմութեան գործին, հրաւիրելով գործակցութեան երկրի բոլոր ընդունակ և կենսունակ ոյժերը:

Դա անվիճելի մի ճշմարտութիւն է, որ տարաբաղդաբար մեզանում դեռ չէ դարձել ընդհանուր գիտակցութիւն:

IV

Մեր երկրի կուլտուրական փորձերի ուսումնասիրութիւնը շատ արդիւնաւոր հետևանքներ կարող է տալ, որովհետև այդ փորձերը կատարվել են մեր իրականութեան պայմաններում, որ անշուշտ ունի իր բնորոշ գծերը և առանձնայատկութիւնները:

Այժմ, երբ մեր երկիրը կոչված է աւելի ընդարձակ կուլտուրական դեր կատարելու և մեր ժողովուրդը սկսում է ցոյց տալ արթնութեան նշաններ, կարևոր է, որ մենք օգտվէինք եղած փորձերի ցուցումներից և զուր տեղը նորից չը կրկնէինք այն, ինչ որ արդէն եղել է և պարզել է որոշ երևոյթներ և յարաբերութիւններ:

Այդպիսի մի ուսումնասիրութիւն կարող է կատարվել տեղական գործողների և մասնագէտների գործակցութեամբ:

Բայց այդ գործը պէտք է կազմակերպել:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նպաստամատոյց Յանձնաժողովի կողմից պատգամաւորութիւնը հասել է Մօսկվա և սկսել է կազմակերպել ժողովարարութեան գործը:

Այդ պատգամաւորութեան անդամներն են Ցուսիկ վարդապետ, Հ. Առաքելեան և Արասխանեան:

Երկրի պահանջը մեծ է: Ցորենի պաշարները սկսել են հատնել գիւղերում: Պէտք է օգնել հացի կարօտ ժողովրդին: Միևնոյն ժամանակ պէտք է միջոցներ ունենալ սերմացու հայթայթելու գիւղերին:

Հայ հասարակութիւնը պէտք է աջակցէ Յանձնաժողովին՝ կատարելու իր վրա վերցրած ծանր և պատասխանատու պարտաւորութիւնը:

—

Քարվանսարա, 26 դեկտեմբերի (պատճէնը Գարեգին արքեպիսկոպոսին).

Ցորենը վերջացաւ. քաղցած գիւղացիք շրջապատում են մեզ. դրութիւնը կրիտիկական է համարվում: Ուղարկեցէք կրկին երեք վագօն ցորեն:

Մասնաժողով

—

Շուշի, դեկտեմբերի 23-ին, արքեպիսկոպոս Սաթունեանին հեռագրում են (պատճէնը չեյխուլիսլամին և Անդրկովկասի մուֆթիին).

Շուշու հասարակութիւնը այսօր հեռագրով խնդրեց Կովկասի Փոխարքային, որ նա գեներալ-նահանգապետ Բաուէրին թողնէ կրկին Շուշում: Խոնարհաբար խնդրում ենք, որ դուք էլ աջակցէք մեր խնդրի բաւարարութիւն ստանալուն:

Իսկանդար-բէկ Ռուստամբէկով, Ղօնդաղսազեան, Զուրաբով, Քալանթարով, Մուրադով, Սէյդիբէկով, Փիրումով, Վարդապով, Սադըխով, Մուսէյբով, Գադրիև:

—

Բաթում, 24 դեկտեմբերի.

Գիշերվայ ժամի 2-ին Գզասալեայի տանը ռումբ պայթեց: Տունը այրվեց ամբողջովին:

(«Հ. Գ.»)

—

Թէլաւ, 24 դեկտեմբերի.

Զինված յարձակում գործ դնելու համար բռնված երեք հոգուց պատերազմադաշտային դատարանը երկուսին դատապարտել է մահվան պատժի, երրորդին՝ 6-ամեայ աքսորի: Առաջին երկուսի դատավճիռը ի կատար է ածված:

(«Հ. Գ.»)

—

Թեհրան, 23 դեկտեմբերի.

Շահի առողջութեան մէջ փոփոխութիւն չէ նշմարվում:

(«Հ. Գ.»)

—

Թեհրան, 25 դեկտեմբերի.

Շահի առողջութիւնը մի փոքր լաւացել է: Որսորդութիւնից վերադարձող գերմանական միսսիայի քարտուղար բարօն Րեյխէնֆէնը և միսսիայի բժիշկ Շուլցը յայտնել են, որ Թեհրանից 19 մղոն հեռաւորութեան վրա նրանք ենթարկվել են 6 զինված ձիաւորների յարձակման: Գերմանացիները կրակել են 12 անգամ և ազատվել են անվտանգ փախուստի դիմելով: Կողոպտիչները կորզել են նրանցից ճանապարհորդական իրերը: Կողոպտիչների դէմ Թեհրանից ուղարկված հեծեալ զօրախումբը հանդիպել է եռանդուն ընդդիմադրութեան: Զինուորներից մէկը սպանված է. կողոպտիչներից բռնվել է միայն մէկը, միւսները կարողացել են փախչել:

(«Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 23 դեկտեմբերի.

Արտաքին գործերի ստատս-սեկրետարի օգնական Նաում-փաշան այցելեց ռուսաց և աւստրիական դեսպաններին և յայտնեց, որ Մակեդօնիա են ուղարկված դատաստանական երկու բարձր պաշտօնեաներ, որոնք գեներալ-տեսչի հետ միասին քննելու են Մակեդօնիայում դատաստանական բարենորոգում մտցնելու նախագիծը:

(«Հ. Գ.»)

—

Սօֆիա, 24 դեկտեմբերի.

Այստեղ ստացված տեղեկութիւններին նայած, Մակեդօնիայում սպանվել է յեղափոխական հրոսակախմբերի գլխաւոր կազմակերպողներից մէկը:

(«Հ. Գ.»)

ԶԵԿՈՒՑՈՒՄՆ ԳԱՐՆԱՆ ԿԱՐԻՔԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիսի կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի վերջին նիստում Ա. Քալանթարը ներկայացրեց հետևեալ զեկուցումը աղէտեալ շրջանների առաջիկայ կարիքի մասին.

«Աղէտի ենթարկված շրջանների գիւղացիների մի չնչին մասը միայն կարողացաւ անել աշնանացան: Այն, ինչ որ անկարելի եղաւ անել աշնանը, պէտք է փոխարինել գարնանացանով. Այդ պատճառով այն գումարները կամ պաշարները, որոնք պէտք է գործ դրվէին աշնանացանի վրա, այժմ պէտք է վերածել գարնանացանի:

«Վնասված շրջանների մեծագոյն մասը պատկանում է լեռնային գօտիներին, որտեղ ցանքսերը լինում են սովորաբար գարնանը: Ուստի գարնանացանի հայթայթման հոգատարութիւնը պէտք է դառնայ հերթական ամենաէական հարցերից մէկը Նպաստամատոյց Յանձնաժողովի համար:

«Օգտվելով այն տեղեկութիւններից, որոնք յայտնի են դարձել թէ մամուլից և թէ անձնական հարց ու փորձերից, ես հաշուել եմ, որ գարնանացանի կարիք կը զգան՝

Շուշու և Կարեագինի շրջ.	մօտ 1300 տ.
Զանգեզուրի	800 »
Ջիվանշիրի	500 »
Գանձակի	500 »
Ղազախի	500 »
Արէշի	200 »
Նախիջևանի	700 »
Ընդամենը	4,500 տ.

«Եթէ ընդունենք, որ իւրաքանչիւր տան անհրաժեշտ է տալ միջին թւով 10 պուդ սերմացու (իսկ գիւղացիները ցանում են 10—50 պուդ), կը տեսնենք, որ սերմացուի հայթայթման համար հարկաւոր է գոնէ 45,000 պուդ ցորեն, որը պէտք է ձեռք բերվէ երկրի մէջ: Իսկ որովհետև ցորենը արժէ ներկայումս $1^1/_2$—2 ռուբլի, ուստի սերմացու գնելու համար պէտք է ունենալ գոնէ 70,000 ռուբլի մի գումար:

«Հոգ տանելով, որ ժողովվի այդպիսի մի գումար առաջիկայ կարիքը լրացնելու համար, անհրաժեշտ է միևնոյն ժամանակ բանակցութիւն սկսել տեղական յանձնաժողովների հետ կազմակերպելու գարնանացանի հայթայթման գործը, որպէսզի նախօրօք ձեռք բերված լինեն սերմացուի պաշարները տեղական ցորենավաճառներից:

«Եթէ աջողվի գիւղացու ձեռքը տալ բաւականաչափ սերմացու, այն ժամանակ Նպաստամատոյց Յանձնաժողովի գործը զգալի կերպով կը թեթևանայ:

«Անկասկած՝ կարևոր է օգնել գիւղացիների մի մասին, նաև տալով նրանց լծկան եզներ, գութաններ, սայլեր. և թէև դրանք համեմատաբար երկրորդական նշանակութիւն ունեն, որովհետև վերաբերում են աղէտեալ տեղերի մի մասին, բայց որոշ կէտերում նոյնպէս առաջնակարգ պահանջի դեր են կատարում»:

Յանձնաժողովը, լսելով զեկուցումը, որոշեց աչքի առաջ ունենալ նրա մէջ եղած ցուցումները ապագայ գործունէութեան համար:

ՄԱՄՈՒԼ

Դեկտեմբերի 17-ից Մոսկվայում սկսել է լոյս տեսնել մի նոր ամենօրեայ լրագիր, «Нов» անունով, որ ուղղութեամբ արտայայտում է ժողովրդական ազատութեան կուսակցութեան հայեացքները և սկզբունքները: Թերթին աշխատակցում են ամենայայտնի հասարակական անուններ: Իր առաջին համարում լրագիրը համառօտ ակնարկ ձգելով Ռուսաստանի քաղաքական ներկայ վիճակի վրա հետևեալ գնահատութիւնն է տալիս նրան.

Մենք կարծում ենք, որ շատ սրտերի մէջ մտած յուսահատ յոռետեսութիւնը աւելի շուտ զգացմունքի բաւականին ջերմ և անհամբեր յոյսերի արդիւնք է, քան դատողութեան խաղաղ վերլուծութեան պտուղ: Այո, «հանդստացած» Ռուսաստանի ամբողջ արտաքին պատկերից քայքայումի, աւերիչ ցրուութեան և քաղաքական ու բարոյական խոր անկման հոտն է փչում: Սակայն չը պէտք է մոռանալ, որ ռուս կեանքի մակերևոյթը յուզող արտաքին անցքերից այն կողմ, նրա խորքում անարգել ու անդադրում կատարվում է ժողովրդի քաղաքական ինքնաճանաչութեան դաստիարակութեան պատմական մեծ պրոցեսը: Ժողովրդական մասսաների կանգ առած տարերային շարժումը փոխվում է մտքի գիտակցական աշխատանքի ունեցած փորձերի հանդէպ: Բազմաթիւ, անտեսանելի թելերը ձգված են ամբողջ երկրի վրայից և միացնում են իրար հետ ազգաբնակութեան այն բոլոր մասերը, որոնք մինչև այժմ անջատ էին իրարից և, համարեա, ոչինչ գաղափար չունէին իրար մասին: Զանազան դասակարգերից և ժողովուրդներից հետզհետէ բաղկանում է ազգութեան մեծ օրգանիզմը, որը անընդհատ կռիւներ է մղում, մինչև որ իրագործում է իր քաղաքական ձգտումները և սահմանում պետական նորմալ ու առողջ պայմաններ:

*

Տնտեսական քայքայման վտանգը և նրա դէմ մաքառելու անհրաժեշտութիւնը, որ առիթ տուեց «Մշակին» մի քանի առաջնորդողներ նուիրելու այդ հարցին, լուրջ ուշադրութեան է արժանացել «Հոսանք» լրագրի կողմից ևս: Վերջինս, իր «Ժամանակակից տնտեսա-արդիւնաբերական ճգնաժամը» առաջնորդողում, խօսելով տնտեսական արդի «սարսափելի ճգնաժամի» մասին, յայտնում է, որ դրա դէմ այլ ևս չը պէտք է կռւել

Կրճատելով արտադրութիւնը, փողոց շպրտելով պրօլետարիատը:

Որովհետև այդ ճգնաժամը

Պատմական անցողական շրջանի արդիւնք է: Նա երևան է եկել կապիտալիստական զարգացման անհրաժեշտ պայմանների բացակայութեան շնորհիւ:

Այդ ճգնաժամը վերացնելու համար ուրեմն հարկաւոր է զարգացնել կապիտալիզմը, ստեղծելով դրա համար անհրաժեշտ քաղաքական-իրաւական պայմաններ: Իսկ հասարակական «կատարեալ կործանման» սպառնալիքը վերացնելու համար հետևեալ կարծիքն է յայտնում.

Մեր ճգնաժամերը արմատական կերպով տարբերւում են եւրոպական ճգնաժամերից.

Մինչ այնտեղ ճգնաժամը կապիտալիստական պրօցեսի շղթայի մի օղակն է կազմում, հետևաբար հէնց իր զարգացման արդիւնքն է, մեզանում' «ճգնաժամերը» երևան են գալիս կապիտալիզմի անբաւարար զարգացման, այդ զարգացման անհրաժեշտ պայմանների բացակայութեան, [illegible] ցումը կասեցնող հանգամանքների շնորհիւ: Եւ այդ պատճառով, մեր «ճգնաժամերը», որ կրում են աւելի տանջալից ու վայրենի բնոյթ, կարող են վերանալ միմիայն այն ժամանակ, երբ ամբողջ պետութեան կառուցուածքը կը վերաշինուի դեմօկրատիքական հիմքերի վրայ:

Հակառակ դէպքում մեր հասարակութեանը սպառնում է կատարեալ կործանում:

*

Եւրոպական մայր ցամաքի վրա բռնկված դասակարգային կռիւը ինչպէս յայտնի է, համախմբելով ատողների և գժգոհների ահագին բանակը, նպատակ ունի բարեփոխել հասարակական և պետական կազմը ստեղծելով սօցիալական արդար կարգեր մարդկութեան ազատ զարգացման համար: Այդ կռիւը սկսեց տարածվել աշխարհի այն բոլոր մասերում, որտեղ կայ կապիտալ, արդիւնաբերութիւն, որտեղ կան շահագործողներ և շահագործվողներ:

Եւրոպական այդ պայքարը սկսեց պղտորել մտքերը և կապիտալի հայրենիք Ամերիկայում, սակայն դա տեղի ունեցաւ սրուխտական կերպով: Ինչպէս ասում է Բոստոնում հրատարակվող «Կոչնակ» լրագիրը, Ամերիկայի այդ շարժման գլխաւոր հեղինակը միլիոնատէր Հըրստն էր, որ տասից աւելի օրաթերթեր ունի ամենախոշոր կենտրոններում, և դրանց միջոցով պրօպագանդա էր մղում ստեղծելու ատողների և գժգոհների մի բանակ, գրգռելով նրանց հարուստների ու կառավարչական անձանց դէմ և հող պատրաստելով նախագահ դառնալու համար: Բայց, լրագրի ասելով, Ամերիկան տեսաւ այդ վտանգը և

Թոյն սեպեց Եւրոպական այն նոր ուղղութիւնը, և վերջին քուէարկութեանց ատեն ապացուց իր երակաց մէջ այդ նոր թոյնը ներարկող, ժողովրդեան մէջ այդ հորիզոնական բաժանման, տարակութեան, ատեան և ուխտի բարքերը մտցնել ջանացող դիմագողները: Ամերիկա լրջութեան և խաղաղ յառաջացման իր հին ճամբան ընտրեց:

«Կոչնակը» «սրամիտ և ճարպիկ» ամերիկացու այդ ընթացքը և վերաբերմունքը դէպի գեմագօգները մեզ հայերիս համար խրատական գործնական դասեր է համարում:

Եւրոպական բարքերու հետ շփման մէջ ենք: Ամեն տեղ հայեր ունինք, ոչ միայն լուռ, կղզիացող անհատներ, կամ համայնքներ, այլ և պրօպականդիստներ—գլուղներ խօսողներ: Գաղափարի այդ նոր առաքեալներ ինչ ուղղութեան կը հետևին: Ինչ ուղղութեան հետեւելու են: Ի՞նչ է անոնց դիրքը Եւրոպայի բարքերուն և նոր կերպերուն հանդէպ: Մեր ընտանեկան, մեր կրօնական, ընկերական և ազգային շարժումներուն մէջ ի՞ր մեթոդին պիտի հետեւինք: Ահա այս մեզ համար ամենակարեւոր հարց մ'է, մանաւանդ այս փոխանցման շրջանին մէջ:

Մենք պիտի քալենք Լինքըլնի պաղ, հաշուող, կիրքէ զերծ քաղաքականութեան ճամբով մեր բոլոր հաստատութեանց և խնդիրներուն մասին:

*

Բուլղարիայում հրատարակվող «Ռազմիկ» թերթը [illegible] մի թղթակցութիւն, Ամերիկայից, Հայաստանցի կնոջ բարոյական շուտափոյթ անկման մասին, ընդհանուրի ուշադրութեանն է յանձնարարում այդ խնդիրը: Լրագիրը այդ անկման պատճառը բացատրում է այսպէս.

Հայաստանցի կինը կամ նշանուած օրիորդը, որ հայրենիքին մէջ գրեթէ արեւու երես իսկ տեսած չունէր, որ գրեթէ մութ սենեակներու անկիւնները քաշուած' զրկուած էր ամեն լոյսէ, ամեն մխիթարութենէ և իր հեռաւոր սիրելին կարօտովը կ'այրէր, հիմա անոնց մէկ մասը, հոս, այս ազատ երկնքի տակ ու ազատ միջավայրին մէջ, իրենք զիրենք բոլորովին սանձարձակ կարծելով, ամեն տեսակ բարոյական անկումներու ենթակայ եղած են:

Խօսելով այդ հարցի մասին Պարիզի «Լուսաբեր» լրագիրը' իր կողմից նկատում է.

Հայաստանցի կնոջ պարկեշտութեան աւանդութիւնը, որ մեր մտքին մէջ մեծկակ տեղ մը գրաւած է, շատ կը նսեմանայ, երբ կը մտածենք թէ' ընդհանրապէս բռնութիւնն է որ հայաստանցի կինը կը պարտադրէ «պարկեշտ» ըլլալ: Կեսուրը, տալները, դրաց-դրացին ամենքն ալ աչքերնին անոր վրա չորս բացած են: Ու այդ ոստիկանական հսկողութիւնը փոխադարձ է, ամենքը իրարու կը նային աչալուրջ: Բռնատիրութիւններն ալ պարկեշտ կը մնան, դիւրութիւն չունենալով ուզածնուն պէս գործել, սպանելու: Բայց երբ այդ կինը ազատ օդին մէջ կը նետուի, իր «անկումը» չուշանար, երբ իր պարկեշտութիւնը համոզումի մը ծնունդ չէ:

Այժմ ընկերական բարոյական խնդիրները սկսել են զբաղեցնել հայ հասարակութեանը: Անհատական անկախութեան պահանջները մի կողմից, միւս կողմից' ընկերական կազմակերպութեան' ընտանիքի գոյութեան խնդիրը անհրաժեշտօրէն կանգնում են հրապարակի վրա:

*

Արտասահմանեան հայ մամուլը սկսել է զբաղվել հայկ. կամ կուսակցութիւնների համերաշխութեան խնդրով թիւրքահայերի հարցի նկատմամբ: «Երիտասարդ Հայաստանը» մեծ հրճուանքով է արձանագրում այդ փաստը.

Մենք գտնում ենք վաղուց հասունացած փորձութիւնների հանդէպ, մենք գտնում ենք վաղուց անկշռահաւութեան հանդէպ, երբ Թիւրքիայում «շունը տիրոջը չէ ճանաչելու», ինչպէս ասում է առածը, և որ գլխաւորն է մեր դրութիւնը ոչ մի ժամանակ Տաճկահայաստանում այնքան վտանգաւոր չի եղել, որքան այժմ, և հայութեան լինել չը լինելու հարցը ոչ մի ժամանակ այնքան սուր կերպով չի դրուած մեր առաջ, որպէս այժմ:

ՍՈՎԵԱԼՆԵՐԻՆ ՀԱՑ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ԳՈՐԾԸ

Ինքնապաշտպանութեան գործից յետոյ չը կայ մի ուրիշ աւելի դժուար պաշտօն, քան սովեալներին հաց մատակարարելը մեր գիւղերում. դժուար է մանաւանդ գաւառի կենտրոնական մասնաժողովի գիտակից անդամների համար, որոնց վրա է ծանրանում բարոյական բոլոր պատասխանատուութիւնը:

Հաւատարիմ մարդկանց կատարեալ սով է մեր գիւղերում. ընտրովի թէ նշանակովի են նրանք այդ միևնոյն է. ամենքը օժտված են [illegible] մտաւուներով, ամենքը տրամադիր, աչքը բացքին, իրանց օգտաւէտ ձեռնաբաց չը թողնելու, որի համար և ընդունակ դիմելու մութ ու զարտուղի միջոցների: Այդ հանգամանքն է, որ, շարունակ զբաղեցնելով մեր միտքը, յաճախ հարկադրում է մեզ պակասել կենտրոնի տաժանելի գործերից և անցնել գիւղերով: Որքան էլ բազմակողմանի կերպով ստուգած ենք լինում գիւղական մասնաժողովների կազմած սովեալների ցուցակները, դարձեալ մեր շրջագայութիւնը նորանոր արդիւնքներ է առաջ բերում ու նոր աշխարհ բաց անում մեր առաջ:

Սակայն որքան էլ արդիւնաւէտ ու նպատակայարմար է լինում գիւղերում կատարած մեր պտոյտը, նոյնքան դժուարութիւնների ու բարդութիւնների հետ է կապված:

Օրը շաբաթ է. դպրոցի դասամիջոցից հազիւ ազատված, պատրաստվում ենք անցնել Աղա-Ջուր, Սև քար և Սար գիւղերը, որտեղից շարունակ բողոքներ են հասնում մեզ: Ճանապարհները զառիվայր ու ցեխ' կառքով գնալու հնարաւորութիւն չը կայ, չը կայ [illegible] վարձու ձի. ժամանակը անցնում է, ձմեռվա առանց այն էլ կարճ օրը մօտենում իր վախճանին և ցուրտը վրա հասնում: Բարիմանտարայի պօստում ես բառ սովորութեան ձի չը կայ. եղածներն էլ ամեն անգամվայ նման նոր են եկել' յոգնած են, կերակրվում են, հանգստանում են. միայն յոյս կայ, որ շատ շուտ' երկու ժամից յետոյ պատրաստ լինեն: Մութն ընկնելիս հ. Մեսրոպ ք. Եսայեանցն ու ես մի դրդան սայլակում (ПАРНЫЙ) նստած, շալ ու փաթաթներում փաթաթված, սլանում ենք դէպի Աղա-Ջուր: Ցուրտը անցնում է մինչև մեր ոսկորները և մենք դողում ենք ամբողջ մարմնով, հետն էլ ծիծաղում մեր այդ աննախանձելի դրութեան վրա:

Խճուղուց մի քայլ հազիւ դուրս եկած, դէպի Աղա-Ջուր բարձրացող ճանապարհի ուղիղ տակը, կանգնում են մեր ձիերը: Մտրակի մի քանի կատաղի հարուածներից յետոյ Սիմոնը (կառապանը) սկսում է ինչ-որ հայհոյանք փնթփնթալ ձիատիրոջ հասցէին... Երկար մտածելու ժամանակ չէր. մենք բարեհաճեցինք իջնել սայլակից, փարաջաներս ուսներովս թափ տալ և խոր ու ամրացած ցեխի աւելի յարմար տեղերով առաջ գնալ: Սիմոնը ձիերի սանձից բռնած նոյնպէս ոտքով հետևում է մեզ. նրա բերանից հայհոյանքը չէ պակասում: Մենք և գնում ենք և մտածում. ահա թէ ձեր է գործելու տեղը, ձեր է հնձի առատութիւնը և մշակների սակաւութիւնը. հէնց այդտեղ, այդ մթութեան, այդ ցեխի ու խաւարի մէջ մի անգամ ևս յիշում ենք Մեծ Վարդապետի խօսքերը:

Մթութեան մէջ երբեմն մի սպիտակաւուն տեղ մեզ չոր է թւում, և մենք այնտեղը կոխելով տղմի մէջ ենք խրվում ու, ներդրութիւնից ճարներս կտրված, էլի ծիծաղում: Տէր Մեսրոպի կրկնակօշիկները ոտքերին մեծ էին և ցեխի ծանրութիւնից մի քանի անգամ դուրս թռան: Մենք քրտնքում կորած կանգ առանք. սայլակը հասաւ մեզ. նստանք նրա վրա և ճանապարհվեցինք. բայց դեռ նոր էինք տեղներս ուղղել, երբ Սիմոնը դարձեալ հրաւիրեց մեզ ցած իջնել...

Ժամի տասն էր, հասանք Աղա-Ջուր, ուր տէր-Յակոբ քահանան հայրն յատուկ հիւրասիրութեամբ ընդունեց մեզ իր տանը:

Հետևեալ առաւօտեան վաղ, գիւղի քաղցածներն էլ, կուշտերն էլ շրջապատեցին մեզ: Մէկն իր ցաւն էր լաց լինում, միւսը իր չքաւոր հարևանին ու բարեկամին էր աշխատում ցուցակի մէջ մտցնել: Ամեն ոք այնպէս էր փաստաբանում իր նեղ դրութիւնը և այնպէս խեղճանում, որ անսովոր մարդն անպայման բոլորին ձրի ցորեն ստացողների ցուցակը կը մտցնէր: Մենք այդ գիւղի մասնաժողովի կազմած ցուցակի 696 հոգին իջեցրինք մինչև 125-ի և պատուիրեցինք վարձով ձի տան մեզ հետևեալ գիւղերն անցնելու:

Մենք բաւական խնդրելուց և սաստելուց յետոյ, հազիւ գտանք երկու ձի, որոնց վարձը մինչև չը վճարեցինք, նրանց տէրերը սիրտ չարին ներկայացնել մեզ: Կէս ժամ ևս, և մենք, մի-մի քուռա ձիու վրա նստած, Աղա-Ջրի ծովացած ցեխի խորութեան միջով, ամեն քայլ ձիու հետ միասին ցեխում թաւալվելու երկիւղով բռնված, յամրաքայլ դուրս եկանք գիւղից թողնելով մեր յետևից փրփրած ու միմեանց դէմ խռովատացող գիւղացիների հարայ-հրոցը:

Սև-քարում պատուիրելով վերադարձի համար երկու ձի պատրաստեն, մենք գնացինք Սար-գիւղը, ուր ցորենների բաժանման գործը կատարվել էր հակառակ մեր տնօրէնութեան:

Սար-գիւղում որքան ուրախ հանդիպեցին մեզ գիւղացիք, նոյնքան գունատ, տխուր ու մտահոգ էին տեղական մասնաժողովի անդամները: Բնութիւնը պարզեց, որ վերջիններս իրաւունք ունէին այդքան այլայլվելու: Մենք դէզբուժներ երևան հանեցինք, ստուգեցինք ու մաքրեցինք սովեալների ցուցակները, պաշտօնից հեռացրինք օրվայ ներսոնաներին, նոր ընտրութիւն արինք և, միւս բաների համար խոստանալով տնօրինել, վերադարձանք Սև քար:

Մութը վրա էր հասնում. սև-քարեցիք ձիու փոխարէն պատրաստել էին մի երկանիւ և մի ձիանի սայլակ (ТАЧКА), որի մէջ երբէք չէի նստած, թէ երբեւէ բաղդ կունենանք նստելու: Հետևեալ առաւօտեան դասեր ունէինք, մնալ չէինք կարող, ուստի սայլակի մէջ խոտ ածեցինք և փառաւորապէս բազմեցինք նրա վրա: Մեր սայլապանը դարձեալ Սիմոն անունն էր կրում և իր ձին ևս նորից ցեխի խորութեան մէջ չէր կարողանում առաջ գնալ, ուստի և անդադար կանգ էր առնում:

Երբեմն, երբ չոր ճանապարհ էր պատահում, Սիմոնը ձիու կապը առնում, բարձրանում էր մեր արկղաչափ սայլակը և, տեղաւորվելով մեր ոտքերի ու ծնկների վրա, արշաւում էր ամենայն արագութեամբ: Անհարթութեան պատճառով, անիւների հարուածներից մենք գնդակների նման թռչկոտում էինք սայլակում, երբեմն գլխով դիպչում, երբեմն գլխի ընկնում, գունդ ու կծիկ դառնում, և այդ դրութեան մէջ դարձեալ ծիծաղում էինք... Բայց ինչ ծիծաղ... երբեմն անիւը քարի դիպչելիս կամ փոսի մէջ ընկնելիս այնպէս ուժգին ցնցում ու թափ էր տալիս մեզ, որ գոնէ ես զգում էի, թէ ինչպէս ուղեղս գանգիս մէջ պատէպատ էր ընկնում:

Այդ դեռ ոչինչ. շատ [illegible] քամի, որը արդէն մեր ծիծաղը լացի փոխեց: Ոչ անձրևակալ (ПЛАЩЪ) ունէինք և ոչ հնար կար հովանոցը բաց անելու: Մեր թշնամուն մեր օրում տեսնել չէինք ցանկանալ:

Անձրևը մեր ոսկորներին էր հասել: Ցրտի, անձրևի ու քամու ձեռքից մենք ու կառապանը միացած, մի զանգուած դարձած, սայլակի մէջտեղը կուչ եկած մտանք Բարիմանտար:

Գիշերվայ ժամի 10-ն էր:

Զաքարիա քահ. Ալբեխեան

ԽԼՐՏՈՒՄՆԵՐ ՇՈՒՇՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

(Դեկտեմբերի 20-ին)

X

Միջնադէպի առիթով դպրոցի ներսում տեղի են ունեցել մի քանի ժողովներ ևս, ուր քննվում էր դարձեալ այդ կնճռոտ խնդիրը, բայց ի զարմանս պէտք է նկատել, որ ժողովը ոչ մի եզրակացութեան չէր կարողանում յանգել: Աշակերտութիւնը վճռական կերպով պ. Մելքոնեանի անյապաղ հեռացումն էր պահանջում, իսկ հոգաբարձութիւնն ու տեսուչը անզօր էին որևէ դրական քայլ անելու այս կամ այն կողմի վերաբերեալ: Հոգաբարձութիւնն իր մի շարք ժողովներում քննելով այդ միջնադէպը և պարզ նկատելով որ իր կորղորները, ուղղված աշակերտութեան' թողնել դասադուլը և հաշտվել ուսուցչի հետ, ոչ մի հետևանք չեն ունենում, ամսիս 13-ին հրատարակել է հետևեալ ազդը' ուղղված հասարակութեան և աշակերտութեան:

«Թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը յայտարարում է ի գիտութիւն Շուշու յարգելի հասարակութեան, որ դպրանոցիս բարձր դասարանների աշակերտների մի որոշ մասի և մի ուսուցչի միջև տեղի ունեցած անախորժ դէպքին վերջ տալու համար հոգաբարձութեանս բոլոր ջանքերը' աշակերտութեան համոզելու այս կամ այն ձևով արդարութիւնը երևան հանելու' ապարդիւն անցան, որովհետև աշակերտները բացէ ի բաց հրաժարվում էին գործի քննութիւնից' պնդելով իրանց որոշման վրա' անպայման հեռացնել ուսուցչին:

«Հոգաբարձութիւնս, անկարող լինելով որևէ արդարացի որոշում անել առանց քննութեան և ի նկատի առնելով' որ նոյն բարձր դասարանների աշակերտների մի ուրիշ մասը գրաւոր և բանաւոր կերպով պահանջում է իր պարապմունքները շարունակել, ուստի յայտնում է ի գիտութիւն, որ դպրանոցի զբաղմունքների մի քանի օրվայ դադարումից յետոյ նորից դպրանոցը ամենքի համար բաց է, սակայն այն պայմանով, որ դասաւանդութիւնը խանգարելու փորձ անող աշակերտների վերաբերութեամբ հոգաբարձութիւնս կը դիմէ վճռական միջոցների»:

Թեմ. դպրանոցի հոգաբարձութիւն

Հայերէն և ռուսերէն լեզուով տպած այս ազդը բողոքաւոր աշակերտութեան վրա ոչ մի տպաւորութիւն չը թողեց. նրանք անսասան էին իրանց վճռի մէջ. աշակերտութեանը չը վախեցրին հոգաբարձութեան «վճռական միջոցները», որ, յետոյ ինչպէս լսեցինք, ոստիկանութեան օգնութեան դիմելու մէջ է կայանում: Ամօթ այն մարդկանց, որ յանդգնում են մինչև իսկ այդպիսի խօսքեր ուղղել դպրոցական հիմնարկութեան հասցէին:

XI

Այս ազդի հրատարակումից յետոյ հոգաբարձութիւնը ժողով է ունենում, ուր հրաւիրվում են նաև աշակերտները' պատասխանելու այդ ազդին: Աշակերտները միաբերան պահանջում են հեռացնել կամ պ. Մելքոնեանին կամ իրանց արձակված համարել: Առաջինի «խաթրը շատ թանգ և ազիզ լինելով», աշակերտներին յայտնում են, որ վաղը բարեհաճեն դպրոց' վկայականները յետ ստանալու: Սակայն վկայականներ ստանալու գործը ձգձգվում է, և ամսիս 15-ին յայտարարում են, որ պ. Մելքոնեան իր մի հրաժարականով թողնում է դպրոցը և հեռանում:

Ամսիս 18-ից պ. Մելքոնեան չէ յաճախում դպրոց, իսկ աշակերտները, ընդհատելով դասադուլը, վերսկսեցին կանոնաւոր պարապմունքները:

Այսպէս, պ. Մելքոնեանը, ի նկատի ունենալով ներկայ քաղաքական պայմանները և 47 աշակերտների ինքնաբերաբար հեռանալը դպրոցից, թողնում է այն մանկավարժական-դպրոցական փշոտ ասպարէզը, ուր 3 ամիս գործել է, ինչպէս ասում են, յօգուտ աշակերտութեան: Նա հեռանում է մի սև բիծ թողնելով Շուշու Թեմական դպրոցի ներքին կեանքում. նա թողնում է դպրոցը իր հետ տանելով աշակերտութեան հակակրանքը: Շուշու Թեմականը չը կարողացաւ հիւրընկալել պ. Մելքոնեանին, և նա հրաժարվեց: Երևի կեանքը կը ժպտայ նրան ապագայում. նա անշուշտ կը գրաւէ այն ասպարէզներից մէկը, որ այնքան առատ է դաշնակցականների համար:

Բարի երթ ձեզ, պ. Մելքոնեան. սակայն մի խորհուրդ,—տեղի տուէք մանկավարժական այնքան դժուարին և պատասխանատու ասպարէզից և գործեցէք ուրիշ ասպարէզներում...

Ոսկու-Ջօն

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՒ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս հաղորդում են «Мол. Ж.» լրագրին [illegible] շրջաններին մօտ աղբիւրներից, կաբինետի քաղաքականութիւնը ներկայումս հետևեալ կերպ է արտայայտվում. համաձայնութիւն կայացնել «մօնարխիստների» հետ և ամեն տեսակ դիւրութիւններ տալ նրանց ընտրողական պայքարի համար, պրօպագանդա սկսել մամուլի մէջ, երբեք ընտրողների վրա ազդելու մի միջոց, հեռացնել գիւղերից ու քաղաքներից «խռովարար» տարրերին: Կաբինետը յոյս չունի ընտրել տալու իր թեկնածուներին ոչ Մոսկվայում, ոչ Պետերբուրգում և ոչ էլ հարաւի խոշոր կենտրոններում: Գաւառների վերաբերմամբ ձեռք առնվելիք միջոցը այն պէտք է լինի, որ չեն թոյլ տալ մայրաքաղաքի մամուլը տարածելու գաւառներում: Ընտրողական մասնաժողովների նախագահները ընդարձակ իրաւունքներ կը ստանան արգելելու այն բոլորը, ինչ որ կենտրոնական իշխանութեան կարծիքով համարվում է օրէնքի և Սենատի մեկնութիւնների խախտում. արգելել օպպոզիցիօն կուսակցութիւններին ուղարկելու պօստով իրանց թեկնածուների ցուցակները և ժամանակաւորապէս դադարեցնել մամուլի օպպոզիցիօն օրգանների հրատարակութիւնը: Կաբինետի գործունէութիւնը տենդային եռանդի բնաւորութիւն ունի. բոլոր նշաններից երևում է, որ թէ կաբինետը և թէ այն ազդեցիկ անձինք, որոնք հնարաւորութիւն են տալիս նրան «գործը հասցնելու իր վախճանին», մեծ պատասխանատուութեան ու վտանգի առաջ են կանգնած:

—Բարձր շրջաններում ուշադրութիւն են դարձրել ընտրողական վերջին հրահանգների վրա, որոնք բոլորովին հակասում են ընտրողական օրէնքների հիմնական յօդուածներին:

Սենատի ուկազի № 189-ի մէջ ասված է. «Ընտրողական թերթիկների բլանկները, որոնք պատրաստվում են առանց քաղաքային վարչութեան գիտութեան, պէտք է համապատասխանեն քաղաքային վարչութեան պատրաստել տուած թերթիկներին ոչ միայն իրանց ձևով, այլև յատկութեամբ ու թղթի դիրքով»:

Այդպիսով վերջին հրահանգներով յարուցված արգելքը անլեգալ կուսակցութիւններին օգտվել իրանց սեփական բիւլլետեններով ուղղակի հակասում է Սենատի մեկնութիւններին:

Միւս կողմից' ապօրէն է այն նորագիւտ կէտը, որով պէտք է վաւերացված լինեն բիւլլետենները, ընտրութիւնների կանոնագրութեան 102-դ յօդուածը ուղղակի արգելում է որևէ նկատողութիւններ ու նշաններ անել ընտրողական թերթիկների վրա:

«Թերթիկների մէջ յիշվում են այն [illegible] անձանց անունները և ազգանունները, որոնց ընտրողը տալիս է իր ձայնը այն թւով, որքան մարդ որ իւրաքանչիւր ընտրողական մասից պէտք է ընտրվեն: Թերթիկի մէջ չը պէտք է լինեն ուրիշ նկատողութիւններ, նշաններ, նոյնպէս և ուղղումներ ու քերվածքներ ոչ մի երեսում: Այն թերթիկները, որոնք չեն համապատասխանում յիշեալ պահանջներին, համարվում են անընդունելի»:

Այն հարցը, թէ ինչպէս պէտք է դուրս գալ այդ ստեղծված դրութիւնից, կը լուծվի առաջիկայ շաբաթվայ ընթացքում:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ներքին գործերի մինիստրի օգնական Կրիժանովսկին բացատրել է Օրլովի նահանգապետին, որ ընտրողական ցուցակների կազմութեան առիթով բողոքներ ներկայացնելու ու քննելու համար ժամանակամիջոցը պէտք է հաշվել ոչ թէ տպագրութեան օրից, այլ այն օրից, որ իսկապէս ստացվել է տեղական գաւառական քաղաքում («Р. В.»)

—Դեկտեմբերի 18-ին, ժողովրդական սօցիալիստ կուսակցութեան Պետերբուրգի խմբակի կազմակերպչական կօմիտեաը, իր միացեալ նիստում, որոշել է պլեբիսցիտ կատարել իր կողմից Պետական Դումայի անդամութեան թեկնածուներ որոշելու համար: Ժողովը ի նկատի ունի հետևեալ անձանց թեկնածութիւնը. Աննենսկու, Միակոտինի, Պէշեխոնովի, Շնիտնիկովի, Սեմեւսկու և Բեբնշտամի:

—Մոսկվայի Պետական Դումայի նահանգական ընտրողական դեկտեմբերի 19-ի նիստում, Մոսկվայի քաղաքապետի պահանջի համաձայն, ընտրողական ցուցակներից դուրս են հանել Լեդնիկովին, Նովգորոդցևին, Կոտլեարևսկուն և իշխ. Պիոտր Դոլգորուկովին: («Р. В.»)

—Ռուս ժողովրդի դաշնակցութեան Պետերբուրգի շրջանային ժողովը դէմ է «ձախակողմեան» կուսակցութիւնների հետ բլոկ կազմելուն, այսինքն իրաւակարգի կուսակցութեան և հոկտեմբերի 17-ի դաշնակցութեան հետ և հնարաւոր է համարել բլոկ կազմելու միայն «Սև բազէների» և «Ակտիվ կռուի դաշնակցութեան» հետ: («Р. В.»):

—Սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան վերջին նիստում քննութեան առարկայ է դարձել այն հարցը թէ' ինչ վերաբերմունք է ցոյց տալիս բանւոր դասակարգը Պետական Դումայի ընտրութիւններին: Առանձին ուշադրութիւն են դարձրել բանւորներին ընտրողական իրաւունքից զրկելու այն խնդրի վրա, որ նրանք իբրև բնակարան վարձողներ կարող էին մասնակցել: Այդ բանը սաստիկ կազդէ ընտրութիւնների հետևանքների վրա: Այդ պատճառով որոշել են ամեն կերպ աշխատել ոչնչացնելու բանւորական կուրիաները և տարածել բանւորների վրա ընդհանուր ընտրողական իրաւունքները: Բացի դրանից ժողովում նկատել են, որ բանւորները անտարբեր են վերաբերվում ընտրութիւններին, և առաջարկել են միջոցներ նրանց աշխուժացնելու համար:

ՄՈՍԿՎԱՅԻ ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Վերջին ժամանակներս արդէն նկատելի երևոյթ է դարձել, որ ազատագրական շարժման մէջ մասնակցող գործիչների դէմ, մանաւանդ Պետական Դումայի այն անդամների դէմ, որոնք ստորագրել են Վիբորգի կոչին, հալածանքներ են սկսված ոչ միայն կառավարութեան կողմից, այլ և ազնուականութեան: Մամուլը արդէն յիշատակել է այդ եղակի գործիչների արտաքսման մասին. դրանք այն ազնուականներն են, որոնք իրանց անձնական, դասակարգային շահերը թողած գնում են ժողովրդի հետ ձեռք ձեռքի տուած, գործում են հայրենիքի իսկական բարօրութեան համար: Ի հարկէ այդպիսի գործիչները գիտակից Ռուսաստանի սիրելիներն են: Մուրոմցեւ, Պետրունկեւիչ ու մի շարք ուրիշները հանրածանօթ սիրելի անուններ են: Ազնուականութիւնը այսօր արտաքսում է իր դասից այդպիսիններին, բայց դրանով կրկնապատկում է նրանց փառքը, պատիւը: Ուրիշ գաւառների ազնուականութեան օրինակին այժմ էլ հետևում է Մոսկվայի նահանգական ազնուականութիւնը, նա էլ է զտում իր շարքերը պրօգրեսիվ, կառավարութեան ու իր դասակարգային շահերի համար անհաճոյ տարրերից, և դէպքը սկսել է Կոկօշկինից: Դեկտեմբերի 15-ին տեղի է ունեցել Մոսկվայի նահանգականութեան արտակարգ ժողովը, որին ներկայ են եղել Մոսկվայի գեներալ-նահանգապետ Գերշելմանը և նահանգապետ Ջունկովսկին: Կարդացել են մի զեկուցում, որտեղ անազնիւ համարելով Վիբորգի կոչը' յարուցել են նրան ստորագրող Կոկօշկինին արտաքսելու հարցը, որի առիթով տաք վիճաբանութիւններ են սկսվել: Մի փոքրիկ գաղափար տալու համար այդ մասին մեր ընթերցողներին, աւելորդ չենք համարում առաջ բերել («Р. В.» լրագրից) երեք հոգու ճառերը, որոնք աւելի հասարակական բնաւորութիւն ունեն:

Իշխ. Ա. Շչերբատովը այն կարծիքը յայտնեց, որ «ներկայ պատմական մոմենտում ռուս ազնուականութիւնը և մասնաւորապէս Մոսկվայինը պէտք է յիշէ, որ ինքը պետական ժողովրդական մի դասակարգ է, որը ամեն բանից բարձր պէտք է դասէ պետութեան, ժողովրդի շահերը: Մենք պէտք է արտայայտենք մեր կարծիքը ոչ միայն Կոկօշկինի մասին, այլև Վիբորգի կոչի մասին, այն քաղաքական շարժման մասին, որը նրան արտադրել է: Այն ուղղութիւնը, որի հետևանքը եղաւ Վիբորգի կոչը, ծնունդ է առել աւելի վաղ, քան այդ կոչի երևան գալը: Ով եղել է Րուզի գաւառում, նա տեսել է, թէ ինչպէս այնտեղ զարգացնում էին այդ հակազգային ուղղութիւնը, որ խախտում է ռուսաց կեանքի արմատական հիմունքները: Կան մարդիկ, որոնք աւելի են մեղաւոր, քան Կոկօշկինը: Րուզի գաւառից ադմինիստրացիան ուղարկել է աքսոր Բալաշովներին, Բաուշովներին, Կրասնոփներին, Անիսկիններին, բայց ամենքն էլ կասեն, որ այնտեղ տարածված այդ ուղղութեան գլխաւոր մեղաւորը անպատիժ է մնացել, նա ազատ է, նա իր տեղումն է»:

Լսվում են բարձր ձայներ. «Ո՞վ է, ո՞վ է դա»:

—Դա իշխ. Պաւ. Դմ. Դոլգորուկովն է,—պատասխանել է իշխ. Շչերբատովը:

Ազնուականութեան մի մասը ծափահարել է «բրաւօ» ասելով:

Դ. Ն. Շիպովը յիշեցրել է ազնուականութեանը, որ Վիբորգի կոչը մի հրաւէր է պասսիվ դիմադրութիւն ցոյց տալ կառավարչական իշխանութեանը: «Ես չեմ համակրում քաղաքական ազատութիւն ստանալու համար կռւելու այդ ձևին, բայց այդ տեսակ ակտերը Արևմտեան Եւրոպայում համարվում են սահմանադրական: Այնտեղ այդ տեսակ պասսիվ դիմադրութեան օրինակներ մենք շատ ենք տեսնում, բայց ոչ ոքի մտքովն անգամ չի անցնում այդ երևոյթը անազնիւ գործունէութիւն անուանելու: Զեկուցման մէջ ասվում է ազնուականութեան միութեան և համերաշխութեան անհրաժեշտութեան մասին, սակայն ժողովը ընդունելով զեկուցումը մեծ պառակտման հիմք կը դնի ազնուականութեան մէջ: Մինչդեռ երկրի քաղաքական վիճակը ներկայ մոմենտում պահանջում է, աւելի քան երբեւիցէ, ազնուականութեան մասերի համերաշխութիւնը և շահերի համաձայնութիւնը, այնպէս ուրիշ ելք չը կայ Ռուսաստանը ներկայ սարսափելի ծանր դրութիւնից ազատելու համար»:

Մի ուրիշը ցանկացել է առարկել իշխ. Շչերբակովին իշխ. Դոլգորուկովի գործունէութեան համար, բայց ազնուականները աղմուկ են բարձրացրել, ոտներով, աթոռներով և սրերով տոփելով յատակը ու «բաւական է» գոռալով:

Վերջում իշխ. Պաւ. Դոլգորուկովը դիմել է ժողովին հետևեալ ճառով. «Ես մտադիր չէի այսօր խօսել, բայց իշխ. Շչերբակովը հարկադրեց ինձ մի քանի խօսք ասելու: Մենք, յարգելի ու սիրելի Կոկօշկինի քաղաքական բարեկամները, չը պաշտպանեցինք և չենք պաշտպանելու նրան այստեղ նրա վրա բարդված մեղադրանքներից և պարսաւանքներից: Կոկօշկինի անունը այնքան լաւ յայտնի է և յարգելի այս դահլիճի պատերից դուրս, որ ժողովի այս կամ այն որոշումը չէ կարող որևէ կերպով խախտել այդ յարգանքը: Դուք այդ անելու համար անզօր էք: Նրա դէմ ուղղված ծանր մեղադրանքները անազնիւ վարմունքի համար չեն հասնիլ իրանց նպատակին, այլ կանդրադառնան հակառակ կողմին: Մի քանի խօսք միայն կասեմ իշխ. Շչերբակովին իմ գործունէութեան դէմ արտասանած ճառի համար: Նրան, ով համարձակութիւն ունեցաւ թէթև կամ, յուսով եմ, իր համար ոչ թեթև սրտով Կոկօշկինին, միաժամանակ և ինձ անազնուութեան մէջ մեղադրելու, ես ուղղակի և էտրական կերպով յայտնում եմ. աւելի մեծ անազնուութիւն եմ համարում «անազնիւ» բառն ի չարը գործածելը իր քաղաքական հակառակորդների վերաբերմամբ, քան Կոկօշկինին վերագրվող յանցանքները: Այդ ձևը բաւականին սովորական է: Մի քանի լրագրներ և քաղաքական գործիչներ սովորութիւն ունեն իրանց քաղաքական հակառակորդներին անուանելու կրամօլնիկներ, անազնիւներ, դաւաճաններ: Որքան որ զօրեղ են այդ խօսքերը, նոյնքան այդ մեղադրական ձևերը անզօր են և ողորմելի: Այդ ձևերին դիմում են սովորաբար քիչ կուլտուրա ունեցող թոյլ մարդիկ, ուրիշ արգումենտացիաներ չունեցողները, նրանք, որոնք չը գիտեն յարգել ուրիշների կարծիքները: Բանի դեռ ես պատիւ ունեմ լինելու Մոսկվայի ազնուականութեան ժողովի անդամ, անկեղծ կերպով կը ցանկայի, որ Մոսկվայի ազնուականութիւնը քաղաքական կրքերի բորբոքման մոմենտում չը դիմէր մի այդպիսի ձևի և չընդունէր մի այդպիսի անարդար վճիռ, որը խիստ է իր ձևով, բայց թոյլ և ողորմելի իր էութեամբ, որը ամենևին չէ կարողացել անուանարկել Կոկօշկինին, այլ աւելի շուտով կը դառնայ դատավճիռ հէնց ազնուականութեան իրա համար»: Այդ ճառը ընդունվել է ծափահարութիւններով և սուլոցներով:

Գաղտնի քուէարկութեամբ 192 ձայնով 80-ի դէմ ընդունվել է Ֆ. Կոկօշկինի արտաքսման հարցը:

ՆԱՄԱԿ ԱՍԽԱԲԱԴԻՑ

Դեկտեմբերի 10-ին

Թուրքեստանի գեներալ-նահանգապետութեան մէջ գտնվող Անդիժան քաղաքում այս քանի օրերում սպանվում է մէկ մարդ' գօրիսեցի Գալուստ անունով: Սպանված Գալուստը ներսի հաշակ էր ստացած իր համագիւղացիներից, հայ-թուրքական կռիւների տաք ժամանակներում: Ի՞նչ հանգամանքների մէջ է տեղի ունենում սպանութիւնը, կամ ինչ շարժառիթից է սպանվում, առ այժմ մնում է պատած մթութեան թանձր քողով. ի հարկէ դուցէ կը լուսաբանվի սպանութեան բուն պատճառը. մեզ այդ չէ հետաքրքրում: Ասխաբադում գտնվող սպանվածի ազգականները և բարեկամները վճռում են դիակը բերել և թաղել Ասխաբադում, որի համար և ստանում են կառավարութիւնից պահանջվող թոյլտւութիւնը: Դիակը բերվում է, և, ամսիս 17-ին, կիրակի օրը, պիտի կատարվէր թաղման ծիսակատարութիւնը եկեղեցում: Պատարագը սկսելուց առաջ, քահանաները յայտնում են սպանվածի բարեկամներին, որ դիակը եկեղեցի բերել չէ կարելի, համաձայն մեր եկեղեցու օրէնքի, քանի որ սպանվածը թաղված է Անդիժանում պաշտօն եկեղեցական ծիսակատարութեամբ. երկրորդ անգամ իրաւունք չը կայ կատարելու թաղման համար պահանջվող ծիսակատարութիւնը: Մոռացայ գրելու, որ բարեկամները յայտնած էին քահանաներին, որ սպանվածը յանձնված էր հողին ժամանակաւորապէս առանց քահանայի, բայց Անդիժանից եկող մի քանի մարդիկ ասում են, որ թաղված է քահանայով. ոչ մէկ և ոչ միւս կողմից դրական ապացոյց չը կար, որին հաւատալ դժուար էր: Քահանաները ապագայ խոչընդոտներից զերծ մնալու համար զգուշանում են կատարել հակառակ կողմի պահանջները:

Ահա այստեղ է հետաքրքիր կողմը. կարծէք մի հրաշագործ գաւազանի զօրութեամբ ծովանում է ամբոխը, իր վայրենի հարայ-հրոցով խլացնում մարդու ականջները, ինչ փողոցային լուտանքներ, ինչ սպառնալիքներ ուղղելով քահանաների հասցէին' կատաղած ամբոխը մոռացած խիղճ, ազնուութիւն, սրբութիւն, մարդկային յարգանքը, ամեն ինչ օրինաւորութեան էր տուել. պատկերը շատ համանման էր հոկտեմբերեան պատմական օրին... խեղճ հայոց ազգ... մեր կը հասնենք այսպէս... Վերջապէս քահանաները տեղի են տալիս կատաղած ամբոխի պահանջին և դիակը բերում են եկեղեցու բակը, կատարում են հարկաւոր ծիսակատարութիւնը և այնպէս տանում գերեզմանատուն թաղելու:

Ի. Գրիգորեանց

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Գանձակ, դեկտեմբերի 21-ին

Իշխանութեան թոյլտւութեամբ և տ. Ե. Նանասեանի նախաձեռնութեամբ երեքշաբթի, դեկտեմբերի 19-ին, Գանձակի տեղական թատերասէրների խումբը Մալեանի տան դահլիճում ներկայացրեց Շիրվանզադէի «Պատւի համար» դրաման 4 արարուածով և «Դոկտոր Թաթոս» վօդեվիլը մէկ գործողութեամբ:

Ներկայացումից ստացված օգուտը պիտի յատկացվի տեղիս հայ աղքատ աշակերտների բազմաթիւ կարիքներին...

Փաստական մեր Գանձակ քաղաքում յաճախակի ներկայացումներ տեղի չեն ունենում, և երբեմն պատահական ներկայացումները մասնաւոր անհատների ձեռներէցութեամբ են լինում: Անասելի դժուարութիւնների և խոչընդոտների առաջը պէտք է առնել, մինչև մի որևէ համեստ ներկայացում կամ երեկոյթ կարելի լինի գլուխ բերել։

Այս անգամվայ ներկայացումը գլուխ բերելու համար պարտական ենք տ. Նանասեանի և մի խումբ օրիորդների ջանքերին։

Գանձակում թատրոն յաճախում են ամեն անգամ գրեթէ նոյն անձինք, որոնց կարելի է միջին դասակարգ անուանել։ Բարձր և ստորին դասակարգերը կամ մշտական փայլում են իրանց բացակայութեամբ, կամ գալիս է նրանց շատ աննշան մասը միայն։

Առաջին դասակարգը լայեղ չէ անում հայկական ներկայացումներին ներկայ գտնվելու, իսկ երկրորդին մենք չենք լայեղ անում, նրանց մարդու տեղ դնում։

Մեզանում ինքնաբերաբար տոմսակ առնելու պահանջը և գաղափարը դեռ ևս արմատ չէ գցել. տոմսակները պէտք է ծախել ուղղակի խնդրանօք, խաթրի համար և յաճախ նոյնիսկ ստիպմամբ։

Բայց և այնպէս շատ ապրեն մեր օրիորդները. ես գտնում եմ, որ նրանք արժանի են հրապարակային շնորհակալութեան, որովհետև բարի նպատակը աչքի առաջ ունենալով և ամեն դժուարութիւններ յանձն առնելով, երբեմն թքի ու մրի արժանանալով՝ յանձն են առել տոմսակներ տարածելու դժուարին գործը։

Եւ այդ ջանքերի արդիւնքն էր, որ այս անգամ ոչ այնքան մեծ դահլիճում այնքան բազմութիւն էր ժողովվել, որ ասեղ ձգելու տեղ չը կար։

Սարքել էին նաև բուֆէտ, ուր ծախում էին զանազան քաղցրեղէններ, խմիչքներ և մրգեղէններ։

Գալով ներկայացմանը՝ կարելի է ասել բաւական աջող անցաւ, և հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ ներկայացումից։

Աւ. Սահակեան

—

Կարս, դեկտեմբերի 16-ին

Անցեալ շաբաթ, ամսիս 9-ին, տեղիս սիրողների խումբը, որ բաղկացած է համարեա բացառապէս ուսուցիչներից, խաղաց «Ռուզան»։ Ամբողջ երեք ամսվայ ամենալուրջ պատրաստութեան և դերերի երկարատև ուսումնասիրութեան արդիւնքը պէտք է վայելէր Կարսի երջանիկ հասարակութիւնը։ Սակայն ի մեծ զարմանս մեր՝ դերակատարները համարեա առանց բացառութեան փչացրին իրանց դերերը, թոյլ ծափահարութիւնների հետ ֆշշոցներ լսելով։

Բայց դա ոչինչ. չէ՞ որ ներկայացումը տրված էր բարեգործական նպատակով—արդիւնքը չքաւոր աշակերտներին էր յատկացված—և հասարակութիւնը մի ծանրակշիռ պարտականութիւն ունէր անընդհատ ծափահարելու և գովասանական բացագանչութիւններ շռայլելու մեր դերակատարների հասցէին։ Բայց տարօրինակն այն էր, որ մի քանի անձնաւորութիւններ, երևակայելով իրանց քաղաքի ուսեալ, այսպէս ասած, երևելիներ, խանգարում էին հասարակութեան որոշ խաւերին իրանց ստացած տպաւորութիւնները որևէ ձևով արտայայտելու։

Ո՛չ, պարոնայք, դուք ոչ մի իրաւունք չունէք արգելելու քննադատութեան պահանջը, որովհետև այդ ձեզ յատուկ բնաւորութիւնների և կարողութիւնների շրջանակից միանգամայն դուրս է։

Ցաւոք, կը կամենայինք մի քանի խօսք ասել ընտրած նիւթի առիթով. մինչդեռ հասարակական կեանքը իր ալեծուփ յորձանքներով վրդովում է մեր պահպանողական տարրերի անուշ նինջը, մինչդեռ հրատապ քաղաքական հարցերը յուզել են գիտակից հասարակութեան ուշադրութիւնը, մինչդեռ ըէալ խնդիրները իրանց այրող այժմէութեամբ հանդէս են գալիս խարազանելու ճահճացած միտքը, մեր «ինտելլիգենտ» ղեկավարները առաջարկում են մեզ «ճոճուան, ոչինչ չասող, հայրենասիրական ֆանատիզմի» պիլիւլները և ժպիտները դէմքներին խունկ են ծխում ֆանտաստիկ պատկերների ֆէտիշի առաջ։

Սխալ էք, պարոններ, դուք մեզ ոչինչ նոր բան չը տուիք, բայց աւելի փչացրիք մեր գեղասիրական ճաշակը.

Դերասանութը ձեր մասնագիտութիւնը չէ, և մի հարուածէք նրա տարածման գործին։

Իշխան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Օլթի, դեկտեմբերի 18-ին.—Ամսիս 16-ին, երեկոյեան, Օլթիի բանիմաց դասակարգը հրաւիրված էր պ. գաւառապետի մօտ, պետական նորմալ ուսումնարանին վերաբերեալ կարևոր գործերի մասին խորհրդակցելու։ Նոյն ուսումնարանի հայ-լուսաւորչական կրօնատոյց Վարդան քահանայ Սառաֆեանը յայտնում է, որ նորմալ ուսումնարանում այգեգործական բաժինը բոլորովին աւելորդ է, պատճառաբանելով որ քանի տարի է այդ բաժինը մտցված է ուսումնարանում, բայց մինչև այսօր ոչ մի աշակերտ կարգին այգեգործութիւն չէ սովորել...։ Սակայն ի պատիւ նոյն ուսումնարանի աւագ ուսուցիչ պ. Կոստանովի պէտք է ասել, որ պատշաճաւոր պատասխանով լռեցնել է տալիս մեր տէր-պապային։ Մի երկու խօսք մեր կողմից ուսումնարանների «նախանձախնդիր» տէր-հօրը։ Տէր-հայր, որպէս զի կարողանաք վնասել այգեգործութեան ուսուցիչ պ. Մ. Շահինեանին, այդպիսի միջոցների էք դիմում, որ նա այստեղից հեռանալով ազատ շունչ քաշէք։ Խորհուրդ ենք տալիս, տէր-հայր, որպէս զի հանգիստ լինէք, ձեռք քաշեցէք կեղծ հասարակական գործունէութիւնից, և որքան շուտ, այնքան լաւ։

Հա, մէկ էլ, տէր-հայր, այդ ինչպէս է լինում, որ ամեն ամսի 17-ից առաջ չէք գնում կրօնի դաս աւանդելու, և երբ ստանում էք ձեր ռոճիկը, մինչև միւս ամսի 17-ը չէք երևում ուսումնարանում. եթէ դուք ձեր արածին չէք հաւատում, հարցրէք բոլոր ուսուցիչներին. նրանցից կը լսէք աւելի դառն ճշմարտութիւն։

Գրիգոր Դաբբինեան

ԴԻՄՈՒՄՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան դռները բաղխում են ամեն օր և օգնութիւն աղերսում բազմաթիւ քաղցած, ցրտահար և երբեմն մերկ որբեր, այրիներ, անօգնական ծերունիներ հիւանդներ ու այլ տառապեալներ։

Ընկերութիւնը նիւթական կողմից գտնվում է շատ ծանր կացութեան մէջ։ Ծախսելիք միջոցները սպառված են, սակայն կարիքը հարկադրել է ընկերութեանը՝ դիմել մինչև անգամ փոխառութիւնների, որ կարողանայ պահպանել իր հիմնարկութիւնները՝ որբանոցը և ճաշարանը, ուր ճաշում են հարիւրից աւելի չքաւոր աշակերտներ և աշակերտուհիներ զանազան դպրոցներից։

Շրջապատող թշուառութիւնը մեծ է և սոսկալի։ Բարեգործական ընկերութեան կոչումը պահանջում է արձագանք տալ թշուառներին և օգնութեան հասնել նրանց։ Ահա այս դրութիւնը, որը աւելի անտանելի է դառնալու առաջիկայ տօներին, երբ խնդրողների թիւը կրկնապատկվում է, ստիպում է բարեգործական ընկերութեան վարչութեանը դիմել հայ հասարակութեան ունևոր և բարեսիրտ անձանց կարեկցութեան և խնդրել նրանց, որ իրանց առատ նուիրատուութիւններով հնարաւորութիւն տան վարչութեանս ամոքել որբերի, այրիների, հիւանդների և այլ զրկվածների արտասուքը և մխիթարել նրանց գէթ չափաւոր նիւթական օգնութեամբ։ Վարչութիւնը վստահ լինելով հասարակութեան համակրութեան վրա ընդունում է շնորհակալութեամբ ամեն տեսակ նուիրատուութիւններ թէ դրամով, թէ ամենայն տեսակ մթերքներով և թէ հին ու նոր հագուստեղէններով (միայն հիւանդների շորեր չը լինեն) ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская площадь № 7) ամենայն օր ժամը 10-ից մինչև 3-ը։

Ստացված նուիրատուութիւնների մասին հաշիւ կը տրվի մամուլի միջոցով։

Նախագահ վարչութեան՝ Մ. Յարութիւնեան
Քարտուղար-անդամ՝ Ա. Աթանասեան

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

—

Կիրակի, դեկտեմբերի 24-ին, առաւօտեան ժամը 11-ին, Արտիստիքական ընկերութեան դահլիճում կայացաւ Հայոց Դրամատիկական Ընկերութեան ժողովը։

Նախագահ պ. Ա. Քալանթար, բանալով նիստը, յայտնեց, որ այդ օրվայ ժողովը, հանդիսանալով նախկինի շարունակութիւնը, բնականաբար, քննելու է անցեալ ժողովից մնացած և չը լուծված հարցերը, այն է. 1) Զեկուցման ակումբի մասին, 2) Հայկական թատրոնի պատմութիւնը կազմելու հարցը, 3) Դերասան Թուրեանի մահարձանի խնդիրը և 4) Դրամատիկական Ընկերութեան ֆինանսական դրութեան հարցը։

Ժողովի համարեա ամբողջ ընթացքում առաջադրված հարցերի նկատմամբ խօսողներից շատերը խօսում էին խրօք ոչ ըստ էութեան, այլ գլխաւորապէս աշխատում էին հերքել դիմացի առարկողի այս կամ այն հայեացքը, դատողութիւնը և, հարկաւ, շեղվում էին բուն նիւթից։ Եւ ուստի մենք կը տանք հակիրճ և ամփոփ տեղեկութիւն, առաջ բերելով գլխաւոր կէտերը և որոշումները։

Առաջինը առաջարկվում է քննութեան առնել հանգուցեալ դերասան Թուրեանի արձանի խնդիրը։ Դերասանական փառաւոր մի շրջան ունեցող հանգուցեալի գերեզմանը ներկայումս գտնվում է անմխիթար դրութեան մէջ։ Անհրաժեշտ է մի արձան կանգնեցնել նրա գերեզմանի վրա, որպէսզի դրանով լռելեայն ասվի, որ առհասարակ շնորհալի և չարքաշ գործիչների մահից յետոյ հայ ազգը չի մոռանում մահարձաններ կանգնեցնել նրանց հողաթումբի վրա...

Որոշվում է դիմել Բագուի և Նոր-Նախիջևանի դրամատիկական ընկերութիւնների վարչութիւններին՝ ժողովարարութիւն անել յիշեալ քաղաքներում, ուր հանգուցեալը շահաւէտ և բազմամեայ գործունէութիւն է ցոյց տուել թատրոնական ասպարէզում։ Իսկ վարչութիւնը, անշուշտ, կը նուիրէ այդ գործին 50 րուբլի։

Երկրորդ հարցի՝ հայկական թատրոնի պատմութիւնը գրելու մասին մի զեկուցագիր է կարդում պ. բժ. Մուրադեանը։

Սկզբունքով ընդունվելով պատմութիւնը գրելու հարցը, խօսողները առաջարկում են, որ, ի նկատ առնելով այդ հարցի պատասխանատու և դժուար իրագործելի կացութիւնը, նախ պէտք է լաւ ուսումնասիրել առաջարկած խնդիրը, որ պէտք է լրագիրներով կոչ անել այդ մասին, որ ցանկալի է որ այդ պատմութիւնը պարփակէ իր մէջ տաճկահայկական և պարսկահայկական թատրոնների պատմութիւնները միաժամանակ և այլն։

Որոշվում է ընտրել մի մասնաժողով, որը վարչութեան հետ միասին զանազան տեղերից այդ խնդրի առիթով նիւթեր կը ժողովէ և կը կազմէ խնամքով և այդ ամենից յետոյ արդէն վարձատրութեան պայմանով կը հրաւիրէ մէկ կամ երկու այդ գործում հմուտ անձնաւորութիւնների, որոնց և յանձնելով պատրաստի նիւթերը՝ կը յանձնարարէ ձեռնարկել այդ յիրաւի որ լուրջ և կարևոր գործին։ Մասնաժողովի անդամներ ընտրվում են պ. պ. Դ. Աղայեան, Ա. Երիցեան, Լ. Բարայեան, Տէր-Գրիգորեան և Ս. Քափանակեան։

Անակնկալ հարց է բարձրանում պ. Շիրինեանի դեռ շատ առաջ արած առաջարկի մասին՝ 5-ական րուբլի անդամավճարի վերաբերմամբ։ Սակայն պ. Շիրինեան բացատրում է, որ այսուհետև տրվող բենեֆիսների պատճառով իր առաջարկը անկարելի է իրագործել։

Տաք և վառվռուն վիճաբանութիւնների առարկայ է դառնում ակումբ հիմնելու խնդիրը, որի մասին կրկին մի զեկուցում է կարդում պ. բժ. Մուրադեանը մասնաժողովի կողմից։

Ճառերից պարզվում է, որ ակումբը անհրաժեշտ է հիմնել, որ ակումբը լինելու է դրամատիկական, ունենալու է բեմ, որ լինի գրական-գեղարուեստական, որ ակումբը ըստ երևոյթին թատրոնական լինելով՝ նրա մէջ պէտք է գլխաւոր տեղը տալ քաղաքական հարցերին, որ նա լինի ընդհանուր, գեղարուեստական, ոչ թէ սոսկ թատրոնական, միացած դրամատիկականի հետ, որ լինի զուտ գրական առանձին, և որը ապագայում կարելի է միացնել դրամատիկականի հետ (օրինակ վերցնելով Հաշտարխանում այդպիսին գոյութիւն ունեցող օրինակից), որ նա կը լինի մի վայր, ուր հրատապ հարցերի վերաբերմամբ մտքերի փոխանակութիւն կը լինի, կարծարծվեն հում և միաժամանակ անհրաժեշտ խնդիրներ, որոնց լուծումը կը յանձնվի ակումբից կազմված մի գործադիր մարմնի, որ ակումբը լինելու է անկախ, ինքը իր գործերը տնօրինող, որով ակնկալութիւն չէ ունենալու դրամատիկական վարչութիւնից դրամական հարցերում, քանի որ վարչութեան դրամարկղը մինչև ակումբ հաստատելը «խոպան դատարկված կը լինի» և այլն. վերջում թերևս կարծիքներից յետոյ 20 ձայնով ընդդէմ 7-ի որոշվում է ընդունել ակումբ հիմնելու գաղափարը. վարչութիւնը և մասնաժողովը միասին կը խորհեն միջոցների մասին ակումբ հաստատելու նկատմամբ։ Այս խորհրդակցութիւնը պարզելու է նաև ապագայ թատրոնի գոյութեան հարցը։

Հարց է բարձրանում հաւասարեցնել մասնաժողովի անդամների թիւը վարչութեան անդամների թւի հետ։ Մասնաժողովի կազմը հաւասարեցնելու և «ուժեղացնելու» համար ընտրվում են պ. պ. Ա. Աթանասեան, Ա. Յարութիւնեան և Ա. Երիցեան։

Վերջին, ֆինանսական հարցի նկատմամբ պարզվեց, որ թէ անձեռնմխելի և թէ գործադրելի դրամագլուխները գործադրութեան հանելով, մօտաւոր ճշտութեամբ մուտք ընդամենը է 12,500 րուբլի, իսկ ծախք մօտ 11,500 րուբլի։ Մուտքից հանելով կողմնակի գումարները, այժմ գանձապահի տրամադրութեան ներքոյ գտնվում է միայն 600—700 րուբլի կանխիկ դրամ, որի՝ ապագայում բոլորովին «համարձակ» նկատմամբ մարգարէ չը պէտք է լինել։

Ժողովի վերջում պ. Քալանթար առաջարկում է, ի տես ունենալով ամենամեայ հաշիւները դրամատիկական ընկերութեան, հրատարակել մի ընդհանուր և մանրամասն հաշիւ՝ ի գիտութիւն ընդհանուրի։ Առաջարկը միաձայն ընդունվում է։

E

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թաւրիզ, դեկտեմբերի 11-ին

Սրտանց ողջունում ենք «Մշակ»-ի և նրա մի խումբ բարեկամների նախաձեռնութեամբ կազմված «Հայկական դեմօկրատական միութիւնը», համարելով այդ նոր կազմակերպութիւն որպէս ժամանակից մի անհրաժեշտ պահանջ։

«Մշակ»-ը իր 34 տարվայ կեանքով միայն «գաղափարի քարոզող»-ի դերումն է եղել և, իր այդ դերը բեղմնաւոր և փառաւոր կերպով է կատարել, իսկ այժմ նա հարկադրվում է մի նոր շրջանի մէջ մտնել, այսինքն իր դերը այժմ կազմակերպված ձևով կատարել, և մենք յոյս ունենք, որ այդ նոր շրջանը պիտի լինի նոյնքան օգտակար հայ ժողովրդի համար, որքան առաջինը. այո, մենք լիայոյս ենք դրան.—«Մշակ»-ի ամբողջ անցեալը մեզ լիուլի գրաւական է դրան։ «Մշակ»-ի ղեկավարներն աչքից բարեկամների հետ միասին իրանց փորձառութեամբ, անկեղծութեամբ և հայ ժողովրդի ճիշտ պահանջների ճշգրիտ գիտակցութեամբ մեզ մեծ հաւատ են ներշնչում, «Հայկ. դեմ. միութեան» աջողութիւն ունենալու մասին։

Ինչպէս յայտնի է «Մշակ»-ի № 251-ի յայտարարութիւնից, «Հայկ. դեմ. միութիւնը» իր կազմելիք ծրագրի մէջ մտցնելու է և Թիւրքահայերի չարաբաստիկ հարցը, և նա չէ կարող այդ չանել, երբե՛ք շուտ տալ այդ հարցից. չէ՞ որ դա «Մշակ»-ի սրտին խիստ մօտիկ խնդիրը է եղել, հէնց սկզբից ի վեր։

«Հայկական դեմօկրատական միութեան» կատարելիք գործը ըստ ամենայնի մեզ ցանկալի լինելով, սրանով մեր սրտագին խնդակցութիւնն ենք յայտնում և ցանկանում ենք կատարեալ աջողութիւն նրան։

Մի խումբ համակրողներ

—

Նոր-Նախիջևան, դեկտեմբերի 18-ին

Նոր-Նախիջևանի Դրամատիկական Ընկերութիւնը բոլորելով իր գործունէութեան 25 տարին, առաջիկայ 1907 թ. յունվարի 7-ին կամենում է տօնել իր գոյութեան 25-ամեակը։ Այս մասին ծանուցանելով ձեզ, խնդրում է զետեղել սոյն տեղեկութիւնը ձեր պատուական լրագրում ի գիտութիւն հայ հասարակութեան։

Նախագահ վարչութեան՝
Գ. Չուբար
Անդամ վարչութեան և քարտուղար՝
Յովհ. Մալխասեան

Հասցէ՝ Нахичевань н/ Дону председателю общества Георгію Чубарову.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ստացանք աղէտեալների օգտին պ. պ. Արտաւազդից և Շահրիարից 3 րուբլի։

—

«Երկիր» լրագրի հրատարակութիւնը Թիֆլիսի գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ դադարեցրված է։

—

Երկուշաբթի, դեկտեմբերի 25-ին, Վանքի մայր եկեղեցում, հանգուցեալ Շխալու յիշատակին կատարվել է հանդիսաւոր հոգեհանգիստ, որին ներկայ են եղել Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեան, Թիֆլիսի հոգևորականութիւնից շատ քահանաներ և հանգուցեալի յիշատակը յարգող մեծ բազմութիւն։ Հոգեհանգստից յետոյ, քահանայ Ծուղուեանը մի սրտառուչ ճառով դրուատել է հանգուցեալի անցեալը և ցոյց տուած ծառայութիւնները՝ «ի [illegible]րած ազգին և հայրենիքին»։ Յետոյ խօսել են նաև մի քանի ուրիշներ, որոնք համառօտակի ծանօթացրել են հանգուցեալի կենսագրութիւնը ներկայ եղող հանդիսականներին։

—

«Մշակի» 282-դ համարում ոստիկանական վերահսկիչ Մելիք-Եգանեանի կեանքի դէմ կատարված մահափորձի առիթով ստացվել են հետևեալ լրացուցիչ տեղեկութիւնները. Յանցաւոր Ապօլօն Ջապարիձէին բռնելուց յետոյ բանտարկել են 5-րդ ոստիկանատանում և երեկոյեան ժամի 7-ին միայն երկու գորոդովոյի ու մի կոզակի հսկողութեամբ ուղարկել են կոմենդանտային վարչութիւնը։ Տանելու ժամանակ Նորաշէնի փողոցում վեց զինված մարդիկ յարձակվում են նրանց վրա, ընդակահար են անում գորոդովոյներին, փախցնում կոզակին և ազատում Ջապարիձէին։ Այդ պատճառով արձակված է պաշտօնից 5-րդ քաղաքամասի պրիստաւ Տուրիկովը։

—

Դեկտեմբերի 25-ին, ցերեկվայ ժամի 11-ին, Վերայի դաշտային մօտիկ Բերլին հիւրանոցի առջև մահափորձ է կատարված միլիցիայի պրապորշչիկ Լօլաձէի դէմ։ Փորձը դարձեալ անցել է անաջող։ Մի երիտասարդ երեք անգամ ատրճանակ է պարպել և երեքն էլ վրիպել են։ Յանցաւորին հէնց ինքը Լօլաձէն է բռնել։

—

«Страна» լրագրին հաղորդում են, որ գեներալ Կուրոպատկինին առաջարկելու են կովկասեան փոխարքայի պաշտօնը։

—

Դեկտեմբերի 17-ին Պետերբուրգ է հասել գեներալ-ադիւտանտ Կուրօպատկինը։ Նիկոլայեվսկի կայարանում նրան հանդիսաւորապէս ընդունել են Պետերբուրգի զինուորական շրջանների ներկայացուցիչները։ («Сегодня»)

—

Դեկտեմբերի 22-ին տաճկաստանցի Կ. Վարդանեանը կախվել է. դիակը ուղարկված է հիւանդանոց։

—

Վ. Մանդինեանը իր մօտ ատրճանակ պահելու և նրանից կրակելու պատճառով դատապարտված է 3-ամսվայ բանտարկութեան և յետոյ, իբրև հասարակութեան համար վնասակար անձնաւորութիւն, աքսորվում է գեն.-նահանգապետութեան սահմաններից մինչև զինուորական դրութեան վերացումը։

—

Կուկիայի ս. Աստուածածին եկեղեցուն կից ծխական դպրոցի հոգաբարձութիւնը որոշել է, որ նոր ուսուցիչներ վարձելիս համաձայնութիւն կապվի դպրոցի հոգաբարձական ժողովի հետ։

—

Ա. Գ. Ժօրդանեան ձերբակալված է և, իբրև պետական կարգ ու կանոնի և հասարակական անդորրութեանը վնասող անձնաւորութիւն (նա անդամ է տեղական տերրորիստ-կոմմունիստական խմբի), աքսորվում է Աստրախանի նահանգը։ («К. Р.»)

—

Դեկտեմբերի 19-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Բագուից մեկնող հեծելազօրի գեներալ Ֆաղէևը վերջին անգամ այցելել է Ջաւէն վարդապետին։ Միւս օրը, առաւօտեան ժամը 10-ին, Ջաւէն վարդապետը և՛ հայ հասարակութեան ներկայացուցիչներից մի քանիսը փոխ այցելութիւն են տուել գեներալ-նահանգապետին, ցաւակցութիւն են յայտնել, որ նա թողնում է Բագուն, և բարի ճանապարհ են մաղթել։

—

Պետերբուրգից ստացված տեղեկութիւնների համաձայն, ադմինիստրատիւ կերպով բանտարկվածների աքսորելը դէպի Օլօնէցկի և Արխանգելսկի նահանգները, դադարեցվում է ցնոր կարգադրութիւն։

—

Իր մեկնումի առիթով, գեներալ Ֆաղէևը հրամայել է անմիջապէս ազատել բանտից Մ. Ա. Սահակեանին, Գ. Ա. Ալթունեանին, Կ. Գ. Համբարձումեանին, Մ. Ա. Մանուկ-Աղայեանին, Խ. Համբարձումեանին, Մ. Ցովէֆեանին, Ջէվատ Կեազիմ-օղլուին, Ա. Կարապետեանին, Մ. Բաբուչեվին, Ա. Գրիգորեանին, Գ. Կօլէսովին, Գ. Կովրիժկինին, Ա. Ֆօմինին, Ա. Զօհրապեանին, Ր. Ժալէնօյին, Ի. Կարապետեանին և Վ. Հայրապետեանին։

—

Դեկտեմբերի 16-ին ժողովրդական ազատութեան կուսակցութեան Պետերբուրգի կոմիտէտը հաշւել է կուսակցութեան անդամներին բաժանած բիւլլետենները Պետական Դումայի թեկնածուների ընտրութեան համար։ Ձայների արդիւնքը մեծամասնութեան կարգով հետևեալն է՝ Րօդիչեվ, Միլիւկով, Ստրուվէ, Կուտլէր, Հեսսէն, Ֆեդօրով, Կաուֆման, Պանտելէեվ, Բօրօզդին։ («Р. В.»)

—

Սեւաստոպօլում սապաժնիկների և Սամարեան գնդի զինուորների միջև ընդհարում է տեղի ունեցել, որի ժամանակ սապաժնիկներից մէկը վիրաւորվել է, իսկ միւսները փախել են։

—

Ինչպէս հաղորդում են «Баку» լրագրին, Բագւում մի խումբ տիկիններ մի համակրելի նպատակով ընկերութիւն են կազմել՝ ժողովարարութիւն անելու յօգուտ գործազուրկների զաւակների, մանաւանդ որ մօտենում են ծննդեան և նոր-տարվայ տօները։ Տալով այս տեղեկութիւնը, լրագիրը վերջում աւելացնում է, որ ներկայումս Բագւում մեծ թւով գործազուրկներ կան, որոնք օրէցօր քաղցի են մատնվում։

—

Թուրկեստանեան երկրի գեներալ-նահանգապետի և զինուորական շրջանի զօրքերի հրամանատարի պաշտօնի համար նշանակված է Պետական Խորհրդի անդամ գեներալ Գրոտեկովը։ Ինչպէս լսել է «Страна» լրագիրը, Գրոտեկովին կատարեալ ինքնուրոյնութիւն և գործողութիւնների ազատութիւն կը տրվի. նրան է վերապահվելու իր համար օգնականներ և զինուորական պաշտօնեաներ ընտրելու իրաւունքը։ Բացի դրանից, նա բոլորովին անկախ կը լինի զանազան մինիստրներից։ Դէպի Տուրկեստան նա կուղևորվի յունվար ամսում։

—

Մեզ հաղորդում են, որ «Рѣчь» լրագիրը իր տրամադրութեան տակ ունի հաստատ ապացոյցներ, որ Պետական Դումայի նախկին անդամ Հերցենշտէյնի սպանութիւնը կազմակերպված է եղել ռուս ժողովրդի դաշնակցութեան սպիտակ ռազմախմբի պարագլուխներից մէկի ձեռքով։ («Р. В.»)

—

Զինուորական մինիստր գեներալ Ռեդիգերի հրաժարականը բիւրոկրատական շրջաններում համարում են արդէն վճռված հարց։ Զինուորական մինիստրի պաշտօնի համար թեկնածու են համարում գեներալնի շտաբի կառավարիչ Պալիցինին և Կազանի զօրքերի զինուորական շրջանի նախկին հրամանատար Կօսիչին։

(«Сегодня»)

Դեկտեմբերի 16-ին բանւորական հարցի մասին կազմված խորհրդակցութեան նիստում քննվել է պարտադիր դարձնել բանւորներին ապահովագրելու դժբաղդ դէպքերի համար։ Մինիստրական օրինագիծը նպատակ ունի անմիջապէս գործադրութեան մէջ մտցնել բանւորների ապահովագրութիւնը։ Իսկ արդիւնաբերողները, գլխաւորապէս Պետերբուրգինն ու Մոսկվայինը, ջերմ կերպով առարկել են ապահովագրութեան անմիջական գործադրութեան դէմ, պատճառաբանելով այդ ռուսական արդիւնաբերութեան բացառիկ պայմաններով։ Եթէ այդ օրինագիծը ընդունվելու էլ լինի, յամենայն դէպս նրանք խնդրում են իբրև օրէնք մտցնել 5 տարուց յետոյ միայն։ Վիճաբանութիւնները շատ աղմկալի է եղել։ («Р. В.»)։

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ մշակված ու արդէն ստորագրված է մի շրջաբերական, որը նպատակ ունի բաւականաչափ կրճատել զեմստվային ինքնավարութիւնների շփումը մամուլի հետ։ Այդ շրջաբերականում մատնանշված է, որ վարչութիւնները բաւականաչափ գրութիւններ են վարում տեղական նահանգական իշխանութիւնների հետ, և շատ դէպքերում ոչ միայն համարվում է անցանկալի, այլ գործի համար վնասակար, եթէ իշխանութեան ներկայացուցիչներին ուղղած այդ գրութիւնների բովանդակութիւնը վաղաժամ լոյս է տեսնում մամուլի մէջ։ Վարչութիւններին առաջարկվում է բոլոր թղթերը, զեկուցումներն ու այդ տեսակ գրութիւնները գաղտնի պահել։ («Сегодня»)։

—

Դեկտեմբերի 23-ին Գանձակի կայարանում ատրճանակի հարուածով սպանվել է ցուցակագրող Վօրօբեօվը։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը իր վերջին նիստում մերժել է ծառայողների խնդիրքը, որով վերջինները խնդրում էին տալ իրանց կէս ամսվայ ռոճիկը սկզբից։

—

Ընկերութիւնների վերաբերեալ գործերի նահանգական վարչութիւնը հաստատել է 1) «Անասունների Հովանաւորող Կովկասեան Ընկերութեան» կանոնադրութիւնը, 2) Ախալքալաքի հասարակական գրադարան-ընթերցարանի նախագիծը. ընկերութիւնը հաստատվում է Գօրու գ. Ախալքալաք գիւղում՝ այն նպատակով, որ իր անդամներին հնարաւորութիւն տայ՝ օգտվել հէնց գրադարանում պարբերական հրատարակութիւններից և գրքերից և տուն տանելու համար ստանալ կանոնադրութեան որոշեալ ժամանակով լրագիրներ, շաբաթաթերթեր և գրքեր, 3) վրաց բարեգործական ընկերութեան կանոնադրութիւնը, որ նպատակ ունի նպաստել Կովկասի փոխարքայութեան սահմաններում ապրող վրացիների նիւթական դրութիւնը բարելաւելուն։ Ա
նպատակին հասնելու համար ընկերութի
ա) նպաստում է ազգաբնակութեան մէջ եր
բագործութեան, առևտրի, արդիւնաբեր
թեան և տնէր կառուցանելուն, օգտակար
հարկաւոր գիտութիւնների տարածման,
կազմակերպում է աղքատ ազգաբնակութեան
մատչելի փոխատուութիւն, գ) աջակցում
գործ փնտռողներին, դ) օգնում է ժողովրդական աղքատների, այսինքն՝ քաղցի, ժանտախտի, հրդեհի, կարկուտի, ջրհեղեղի ժամանակ վնասված անձանց, ե) կարիք եղած դէպքում իր հաշւով կազմակերպում է սանիտարական խմբեր կամ թէ ուղարկում է գաւառները իր լիազօրներին, իւրաքանչիւր անգամ ստանալով իշխանութեան թոյլտուութիւնը, զ) ծայրայեղ դէպքերում կարօտեալներին հասցնում է դրամական նպաստներ և է) կարօտեալների համար հիմնում է աշխատանքի տներ, ապաստարաններ և բարեգործական այլ հաստատութիւններ։

—

Ինչպէս հաղորդում են «Тифл. Курьеръ» լրագրին Պետերբուրգից, վրաց աւտօկէֆալութեան հարցը բացասաբար է վճռվել։

—

Սեմիրեչէնսկի մահմեդականների լիազօրները դիմել են մինիստրների խորհրդի նախագահին մի հեռագրով, որով աղերսում են, մուսուլմաններին հանգստացնելու համար փոխել ներքին գործերի մինիստրի օգնական Կրիժանովսկու հրամանը, որի համաձայն մուսուլմանների մօտ 70%-ը զրկվում է Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելուց, և նկատում են, որ այդ սահմանափակումներն անհիմն են, ապօրէն և հակասում են բարձրագոյն հրամանին։ («В.»)։

—

«Страна» լրագիրը հաղորդում է մի շատ հետաքրքիր բանաձևի մասին, որ ընդունել է ռուս նաւատորմղի վերանորոգութեան խնդրով զբաղվող լիգայի ընդհանուր ժողովը Բեռենկոյի զեկուցումից յետոյ։ Լսելով գրահանաւային նաւաշինութեան դրութեան և այդ առիթով եղած եզրակացութեան զեկուցումը, նաւատորմղի վերանորոգութեան լիգան իր պարտքն է համարում մի անգամ ևս նախազգուշացման երկիւղ յայտնել՝ նոյն իսկ ծովափերը պաշտպանելու համար մեր ծովային ուժերի անկարողութեան մասին։ Նաւատորմղի վերանորոգութեան լիգան ցաւալի մտապատկեր է կազմում, որ այն յատուկ հաստատութիւնները, որոնք պարապում են ամենակատարելագործված տեսակների և առաւելապէս իսկական միջոցներ փնտռելով, արտաքին ազդեցութիւնների ներքոյ կանգնեցնեն ժամանակը՝ կարգաւորելու և զարգացնելու բաւականին չափով այն, ինչ որ արդէն գործադրութիւնը հաստատել է։ Այդպիսով կարող է կրկնվել նոյնը, ինչ որ արդէն եղաւ 1871 թուականից յետոյ, երբ անգլիացի ինժինէր Ռիդի խորհուրդները, որ ուղղված էին ծովափեա Պօպօվի կլօրակ նաւերի մասնաւոր գաղափարը պաշտպանելուն, արգելեցին Ռուսաստանին իր ժամանակին Սև ծովում հաստատել եթէ ոչ մեծ, սակայն ակտիւ մի նաւատորմիղ։ Ուստի յետագայ ռուս-տաճկական պատերազմը անցաւ մեզ համար ծայրայեղ չափով աննպաստ պայմաններում, և նրա հետևանքները մեզ համար խրատ և օրինակ չը ծառայեցին։ Զինվելով ճշգրիտ ցուցմունքներ՝ քաղաքական փոխադարձ յարաբերութիւնների մասին և զգալով հասարակական երևոյթներով և հանդէպ բոլորի զինելով պաշտպանութեան միջոցների դրութիւնը, նաւատորմղի վերանորոգութեան լիգան սարսափով տեսնում է, որ ապաւինում են նորանոր պատրաստութիւններ, և ուստի որոշում է հրատարակել այս կարծիքները և հէնց այժմեան կազմել մի խմբակ այն անձերից, որոնք կը ցանկանան զբաղվել ծովային-զինուորական պաշտպանութեան և օժանդակիչ միջոցների հարցերի մօտակայ քննութեամբ, որպէս զի ազգային դժբախտութեան ժամին կարելի լինի օգնութեան հասնել գիտութեան՝ կատարեալ սպառազինութեամբ։

—

Պ. Միլիւկովին գաւառական ընտրողների ցուցակի մէջ մտցնելու հարցը բոլորովին վերցրված է ասպարէզից, բայց խնդիր է յարուցված նրան մտցնելու Պետերբուրգի քաղաքային ընտրողական ցուցակի մէջ, որովհետև նա ներկայացրել է որոշ ապացոյցներ, փաստեր, որ նա ընտրողական ցենզ ունի։ Այդ հարցը այնուամենայնիւ դեռ ևս չէ լուծված։ («Бирж. Газ.»)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբերի։ Նոյեմբեր ամսվայ ընթացքում Եւրոպական Ռուսաստանում, պետական խմիչքեղէնների վաճառումից մուտք ստացվել է 61,085,780 րուբլի—անցեալ տարվանից 6,198,995 րուբ. աւելի, ամսվայ ընթացքում ընդամենը՝ 583,333,341 ր. անցեալ տարվանից 75,536,075 ր. աւելի։—Սենատը, դեկտեմբերի 22-ին քննելով Պետական Դումայի ընտրութիւնները թերթիկներով կատարելու նկատմամբ դեկտեմբերի 10-ին ներքին գործերի մինիստրութեան հաստատած կանոնները, որոշեց հրատարակել նրանց։

ՊՈԼՏԱՎԱ, 23 դեկտեմբերի։ Տեղական իշխանութիւնը քրէական դատ է բացել գրող Կորոլէնկոյի դէմ «Մինիստրի խօսքերը և նահանգապետի գործերը» վերնագրով յօդուածի համար, որ հրատարակվել է առանձին բրօշիւրով, սակայն վերջում գրաւվել է։

ԼՈՆԴՈՆ, 22 դեկտեմբերի։ Ռուս-ճապօնական բանակցութիւնների և Պարիզում ճապօնական դեսպանի հետ տեղի ունեցած խօսակցութեան մասին ստացված տեղեկութիւնները վերջ դրեցին տեղիս յուզմունքներին և երկիւղներին։ Անգլիական մամուլը՝ վերջին բանակցութիւնների նկատմամբ լռութիւն պահպանելը բացատրվում է մասամբ ծննդեան տօներով, սակայն այդ լռութիւնը վկայում է նաև, որ Անգլիան, չը նայելով որ դաշնակից է Ճապօնիային, վճռել է աջակցութիւն ցոյց չը տալ նրա պահանջներին և իրան պահել միանգամայն չէզոք։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 դեկտեմբերի։ Սենատի կարգապահական բաժինը, հիմնվելով դատ.
295

սրանց դէմ յարո

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ ՄԱ
բերի։ «Ֆրանկֆուրտ. Ցայտունգ»-ը
է, որ երէկ, Լանշէյդ-Ունարիկ երկաթուղագծի աշխատանքները կատարելու ժամանակ հանքերից մէկը փլել է, որի տակ անյայտացել են 40 բանւոր։ Մինչև երեկոյ հանել են միայն երեքին։

ԼՕՁ, 23 դեկտեմբերի։ Զինւորի կեանքի դէմ մահափորձ կատարելու համար գիւղացի Գրուշինսկին պատերազմա-դաշտային դատարանի վճռով հրացանազարկութեան է դատապարտվել։

ԵԼԻՍԱՒԷՏԳՐԱԴ, 23 դեկտեմբերի։ Նիկօլաևկա գիւղացի երկու պատանիներ, ճանապարհին հանդիպելով սայլակով հարևան գիւղը գնացող գիւղական մի ընտանիքի, սպանել են տղամարդուն, բռնաբարել են կնոջը և, կողոպտելով իրերը, ձի հեծնելով փախուստ են դիմել, սակայն շուտով էլ բռնվել են։ Նիկօլաևկացիները, տեղեկանալով իրանց համագիւղացիների արարքի մասին, իրանք իրանց ձեռքով նրանց դատաստանը կտրել են, այսինքն երկուսին էլ սպանել են։

ՆԻԿՈԼԱԵՎ, 23 դեկտեմբերի։ Ծննդեան առիթով, զինուորական նահանգապետը հրամայել է բանտից արձակել պարտադիր կանոնները խախտելու համար բոլոր բանտարկվածներին։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 23 դեկտեմբերի։ Գեներալ-նահանգապետը կարգադրել է դեկտեմբերի 29-ին արձակել այն բոլոր անձանց, որոնք բանտարկված են նրա հրամանով։

24 դեկտեմբերի

ՍՕՖԻԱ, 23 դեկտեմբերի։ Երկաթուղային ծառայողների պատգամաւորութեան, որը ներկայացրել է գործադուլների պահանջները՝ ռոճիկները աւելացնելու և գործադուլների դէմ կռվող նոր օրէնքը վերացնելու մասին, մինիստր-նախագահը մերժել է բոլոր պահանջները և յայտնել է, որ շատ խիստ միջոցներ ձեռք կառնվեն գործադուլների դէմ։ Գործադուլը շարունակվում է, վերականգնած է միայն երկաթուղային երթևեկութիւնը, իսկ ապրանքատար գնացքները կանգնած են։ Վաճառականները մեծ վնասներ են կրում։ Լուրերին նայած, գործադուլները աջակցութիւն են գտնում օտարազգի բանւորական դաշնակցութիւններից։ Երեկոյեան, սոցիալիստների ժողովում բողոքներ յայտնվեցին կառավարութեան գործելակերպի դէմ։ Գործադուլի պատճառով Բուլղարիայի միջով ապրանքներ տեղափոխելու համար ընդունելութիւն չը կայ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 դեկտեմբերի։ Այսօր քաղաքս ժամանեց նոր նշանակված աւստրօ-ունգարական դեսպան Բէրտոլդը։

ԼՕՁ, 23 դեկտեմբերի։ Կուսակցական հողի վրա կատարվող սպանութիւնները, ըստ երևոյթին, վախճան չեն ստանում։ Համարեա ամենայն օր սպանութիւններ են տեղի ունենում։

ՊԱՐԻԶ, 23 դեկտեմբերի։ «Էկօ-դը-Պարիի» աշխատակիցներից մէկի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ Մօտօնօ յայտնել է, որ Ռուսաստանը և Ճապօնիան հաւասարապէս զգում են համաձայնութիւն կապելու անհրաժեշտութիւնը։ Մօտօնօն հաւատացած է, որ մօտիկ ապագայում կը կնքվի մի այնպիսի պայմանագիր, որպիսին կամրացնէ և կը կայէ երկու պետութիւնների փոխադարձ բարեկամական յարաբերութիւնները։

ՎԱՐՇԱՎԱ, 23 դեկտեմբերի։ Պատերազմա-դաշտային դատարանը եռանդով գործում է։

ԿԱԼԿՈՒՏԱ, 23 դեկտեմբերի։ Աւղանիստանի էմիրի Հնդկաստան մեկնելը կը նպաստէ անշուշտ մահմեդական շարժման արագ տաբաժմանը։ Այդ շարժումը հակադիր է հակաբրիտանական շարժման, որ ծագել է ներկայումս ինդուսների մէջ։ Հնդկական մամուլը համակրանքով է վերաբերվում էմիրի ճանապարհորդութեանը։

ԲԷԼՕՍՏՕԿ, 23 դեկտեմբերի։ Գեներալ-նահանգապետը ծննդեան առիթով արձակել է 14 բանտարկեալների, որոնք խախտել են պարտադիր կանոնները։ Առհասարակ, ուրիշ շատ քաղաքներում գեներալ-նահանգապետները այսպէս են վարվում։

ԿԻԵՎ, 23 դեկտեմբերի։ Ձերբակալված են սոցիալ-դեմօկրատներից 13 հոգի ժողովի ժամանակ։ Մի փողոցում ոստիկանութիւնը երևան է հանել Ուկրայնայի դեմօկրատիական կուսակցութեան տպարանը։ Գրաւված են 5 պուդ տառ և տպելու պէս-պէս պարագաներ։

Կ. ՊՕԼԻՍ, 23 դեկտեմբերի։ Դարդանէլում բռնված ունգարական նաւը, որը զէնքեր է տանելիս եղել Բուրգաս, բաց է թողնված աւստրո-ունգարական դեսպանի միջնորդութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 դեկտեմբերի։ Արդարադատութեան մինիստրութիւնը բացատրել է, որ առևտրական և արդիւնաբերական ընկերութիւնների կանոնադրութիւնները ցուցակագրել կարող են նահանգական և քաղաքական ընկերակցութիւնների և միութիւնների վերաբերեալ գործերի վարչութիւնները, եթէ նըպատակ չունեն եկամուտ ստանալ որևէ ձեռնարկութիւնից, իսկ մնացեալ դէպքերում ներկայացնվում են արդիւնաբերութեան և առևտրի մինիստրին՝ ի հաստատութիւն պատշաճ կարգով։

ԲԷԼԳՐԱԴ, 23 դեկտեմբերի։ Երկիւղ կայ, որ Ծնունդից յետոյ մինիստրութեան մէջ կամ ամբողջովին կամ մասնակի կերպով ճգնաժամ կը ստեղծվի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 դեկտեմբերի։ Սպանված քաղաքապետ ֆօն-դէր-Լաունիցի այրին արժանացել է Թագաւոր Կայսրից ստանալ հետեւեալ հեռագիրը.

«Կայսրուհին եւ ես խորապէս յուզված Մեր հաւատարիմ ծառայի գազանային սպանութեամբ, առաքում ենք ձեզ, Մարիա Ալէքսանդրովնա. Մեր սրտից բղխող անհուն ցաւակցութեան զգացմունքները ձեզ պատահած վշտի առիթով։ Եւ թող Տէր Աստուածը ոյժ եւ զօրութիւն պարգեւէ ձեզ, որ կարողանաք տանել այդօրինակ խիստ եւ հասցուած հարուածները. ՆԻԿՕԼԱՅ»։

ՖԻԼԱԴԵԼՖԻԱ, 23 դեկտ.։ Ազգային բանկը մտաւ մի անյայտ անձնաւորութիւն և փող

[illegible] ։ Ծրնա-

[illegible] դեկտեմբերի

[illegible]ՐԲՈՒՐԳ, 24 դեկտեմբերի։ Հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը բացատրել է գիւղատնտեսութեան տեսուչներին և գիւղատնտեսական մասի լիազօրներին, որ նրանք հողային բարեկարգիչ մասնաժողովներում չը պէտք է շօշափեն հողային հարցի ընդհանուր սկզբունքները, այլ միայն պէտք է գործնեայ օգնութիւն մատուցեն զանազան գործնական հարցերի մշակման և իրականացման։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 դեկտեմբերի։ Ներքին գործերի մինիստրութիւնը հաղորդել է նահանգապետներին. 1) Պետական Դումայի առաջիկայ ընտրութիւնների համար իր ոյժի մէջ է մնում 1906 թւի փետրվարի 24-ին հրատարակված հրահանգագրով առաջարկված ընտրողական թերթիկի նախկին ձեւը սոսկ այն տարբերութեամբ միայն, որ թերթիկի հակառակ երեսի վրա պէտք է դրոշմված լինի քաղաքային վարչութեան կնիքը և 2) թերթիկների միջոցով Պետական Դումայի ընտրութիւնների կարգի մասին սոյն դեկտ. 10-ի կանոնների հաստատման հետ զուգընթացաբար 1906 թւի փետրվարի 24-ի հրահանգրի 16-ը և 19-րդ յօդւածներն էլ պահում են իրանց ոյժը։

ԻՒԶՕՎԿԱ, 24 դեկտեմբերի։ Հանքերում, ինժիներ Շիլօվսկու բնակարանը ներս են խուժել մի քանի զինված անձինք, երբ նա հաշիւ է տալիս եղել կապալառուներին, և, կորզելով 3160 ռուբլի, անյայտացել են։ Կասկածով բռնել են երեք հոգու, որոնց խուզարկելով գտել են 2600 ռուբլի, երկու բրաունինգ և մաքսիմալիստների կնիքը։ Հանքերի գրասենեակապետը ճանաչել է, որ յիշեալ ձերբակալվածները դեռ նոյեմբեր ամսին կողոպտել են կրկին 9000 ռուբլի։

ԼՕՁ, 24 դեկտեմբերի։ Կուսակցական հողի վրա տեղի ունեցող սպանութիւնները, վիրաւորելու դէպքերը դեռ մի առանձին տենդով շարունակվում են բանւորների մէջ։

ՏԱՆԺԷՐ, 24 դեկտեմբերի։ Դեկտեմբերի 23 ի առաւօտեան ժամը 11-ին կրակ բացվեց Ռայսուլի բերդի դէմ։ Վերջինիս զօրքերը պատասխանեցին։ Ի նկատի ունենալով Ռայսուլի հրացանների լաւ տեսակը, Վէբասի կողմից հրացանային կրակը փոխարինվեց թնդանօթներով։ Ժամը 2 ի մօտերը բերդի կողմից տեղացող կրակը վերջացաւ, բերդը լռեց։ Ջէբասի լրտեսները իրեան են հաղորդել, որ Ռայսուլին թողնելով Ցինատը հեռացել է անյայտ ուղղութեամբ։ Ենթադրում են որ նա թագնվում է հարեւան լեռնաշխարհում։ Ռայսուլը կորցրել է ընդամենը 50 հոգու. կառավարական զօրքերից սպանվել են 20 զինուոր։

ՍՕՖԻԱ, 24 դեկտեմբերի։ Երկաթուղային գործաւորներից շատերը վերստին ծառայութեան են կոչվել իբրև պահեստի ծառայողներ։ Նրանք այժմ են զգում պասիվ ընդդիմադրութեան անօգուտ լինելը։ Սակայն, կառավարութիւնը յոյս ունի դեկտեմբերի 24-ին, առաւօտեան, վերականգնել մասամբ և ապրանքատար գնացքների երթեւեկութիւնը։ Միւս կողմից սոցիալիստները ագիտացիա են մղում բանւորական ընդհանուր գործադուլ յայտարարելու օգտին, յորդորելով և համոզելով որ դա մի ցոյց կը լինի կառավարութեան դէմ։

ՎԻԷՆՆԱ, 24 դեկտեմբերի։ «Նէյե-Վիէնէր-Տագէբլատ» լրագրի Պետերբուրգի թղթակիցը պնդում է, որ ճապօնացիները ձկնորսութեան դաշնագիր կապելու առիթով մղվող բանակցութիւնների ժամանակ արտակարգ պահանջներ են առաջադրել, որոնց Ռուսաստանը, չը նայած իր զիջողութեան, պէտք է որ մերժի։

ՊՕԼՏԱՎԱ, 24 դեկտեմբերի։ Երեկոյեան, երեք անիշխանականներ մտնելով Մօլտաւբոսկու մեծ ջրաղացը և սպառնալով ատրճանակներով՝ պահանջել են խոշոր մի գումար։ Չէկոքացնելով գրասենեակը և խուզարկելով ծառայողներին, կողոպտիչները վերցրել են 500 ռուբլի և հեռանալով հրամայել են պատրաստել 10,000 ռուբլի։

ՎԱՐՇԱՎԱ, 24 դեկտեմբերի։ Պօստի վրա յարձակում գործելու համար, պատերազմադաշտային դատարանը 9 հոգու մահվան է դատապարտել. մէկին միայն արդարացրել է։

ՏԱՄԲՕՎ, 24 դեկտեմբերի։ Հաստատված և վաւերացված է միջկուսակցական ընտրողական մի կօմիտէ, որը նպատակ ունի միացնել ընտրութիւնների ժամանակ այն բոլորին, որոնք հակառակորդ են յեղափոխութեան, իսկ կողմնակից՝ Պետական Դումայի օրինաչափ գործունէութեան և կարգ ու կանոնին, իսկ մնացած կէտերում առանց ուշադրութիւն դարձնելու քաղաքական հայեացքներին։ Կօմիտէտը անցնելու է անկուսակցական թեկնածուների։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ, 24 դեկտ.։ Պ. Ա. Ստոլիպինը պատասխանել է ռուս մարդկանց դաշնակցութեան Ալէքսանդրովի բաժնին. «Շնորհակալ եմ ողջոյնի համար. տայ Աստուած, որ ազնիւ ռուսների ձեռքով Ռուսաստանը ուժեղ դուրս գայ Կայսրի՝ գահի բարձրունքից ազդարարած սկզբունքների իրականացման փառաւոր ճանապարհի վրա…»։

ԼՕՆԴՕՆ, 24 դեկտեմբերի։ «Օբսէրվէրի» ասելով, Ֆիլադելֆիայում բանկի մէջ ռումբ նետողը ռուս է եղել։

ԲԵՐԼԻՆ, 24 դեկտեմբերի։ «Նացիոնալ-Ցայտունգը» իր առաջնորդող յօդւածում խօսում է Ռուսաստանի իրերի դրութեան մասին։ Յօդւածում ասված է, որ 1905 թ. վերջում զինված ապստամբութեան ճնշելը վերստին հաստատեց պետական իշխանութիւնը և խորտակեց նրա հակառակորդների ոյժը։ Շատ և շատ երկար ունկնդրելով յեղափոխականների ճոռոմ ճառերին, ժողովրդի ընդհանուր զգացմունքն էին սպասում, սակայն սխալվեցին։ Ոչ մի ձայն, ոչ մի ձեռք չը բարձրացաւ արձակված Դումայի պաշտպանութեան համար։ Վերջին հինգ ամսում Ռուսաստանի հանգստութիւնը նկատելի աջողութիւններ է երևան հանում։ Բողոքական յուզմունքը հան- տվում է, և ռուս կառավարութիւնը ըն- նակ գտնվեց ղեկավարել պետական գոր- րը, իսկ բիւրօկրատիան, չը նայած մի յարձակումներին, անհամեմատ լաւ է ավարում երկիրը, քան բանւորների և ափոխականների կազմակերպութիւնները։ ժամեան դրութեան դժուարութիւնների մէջ նոյն իսկ, Ստոլիպինը անփոփոխ, խելացի և պետական ճարտար գործիչ է ցոյց է տալիս իրան։ Պէտք է յուսալ անշուշտ, որ նրան կյաջողվի ոչ միայն երկրորդ Դումա գումարել, այլ և նրան ռուսական պետական կեանքի խելացի ֆակտորը դարձնել։ Այս տարին ցոյց տուեց, որ Ռուսաստանի վերածնութիւնը առանց Ցարի, եկեղեցու, զօրքի և պաշտօնական անձանց հիրարխայի՝ անհասկանալի և անըմբռնելի է։ Կառավարիչների խելացիութիւնից և անձնազոհութիւնից — մի կողմից, և լիբերալների չափաւորութիւնից—միւս կողմից, կախված է, հարկաւ, այն հարցի լուծումը, թէ արդեօք Ռուսաստանը կը զարգանայ խաղաղ ճանապարհով, թէ ոչ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 դեկտեմբերի։ Քաղաքապետի դիակը տարվեց եկեղեցի, ուր հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց, որին ներկայ էին Մեծ Իշխան Սէրգէյ Միխայլովիչը, Կայսերական Պալատի, ճանապարհների հաղորդակցութեան, ժողովրդական լուսաւորութեան մինիստրները և Կայսերական ամբողջ շքախումբը։ Դիակը ուղարկվեց Տամբովի նահանգը, հողին յանձնելու։

ՍԱՄԱՐԱ, 24 դեկտեմբերի։ Ազնուականները պ. Ա. Ստոլիպինին ուղարկել են հետեւեալ հեռագիրը. «Վերջին օրերի մի շարք քաղաքական սպանութիւնները, որ վերստին զրկեցին հայրենիքին՝ իր փառքի և հզօրութեան տոկուն և ջրաժան պաշտպաններից, կոմս Իգնատիեվի և գեներալ ֆօն-դէր-Լաունիցի նման անմոռանալի մարդկանցից, ստիպում է Սամարայի նահանգի ազնուականներին արտայայտել ձեզ մեր խոր զայրոյթը և սրտից բղխող անսահման վիշտը և միենոյն ժամանակ մի անկեղծ համոզմունք, որ ձեր անձնուրաց առաջնորդութեամբ, Գահի պաշտպան հերոսների շարքերը ոչ միայն կը պակասեն չարագործութիւններով, այլ ընդհակառակն յեղափոխութեան իւրաքանչիւր նոր զոհը ասպարէզ կը հանէ՝ դէպի ակտիվ ընդդիմադիր կռիւ՝ Կայսրին նուիրված գործիչների աւելի և աւելի մեծ թիւ և ընդհանուր ոյժերով, միահամուռ ջանքերով, նորից կը փայլէ արեգակից պայծառ մեր Միապետի պսակը…»։

ԿԻԵՎ, 24 դեկտեմբերի։ Եանովկա գիւղում, մի գիւղացու տանը չարագործները մորթել են 7 հոգու։

ԼՕՆԴՕՆ, 24 դեկտեմբերի։ Տանժերից ստացված տեղեկութիւնների համաձայն, իշխանութիւնները արգելել են ֆրանսիացի օֆիցեր Բէտլդէրին՝ ղեկավարել Ցինատի ռմբակոծութիւնը, որի համար խնդրել էր Մարոկկոյի զինուորական մինիստրը։ Զօրքերը արդէն սկսել են ռմբակոծել ապստամբներին։

26 դեկտեմբերի

ԽԱԲԱՐՕՎՍԿ, 25 դեկտ.։ Բերդում երևան է հանված մի մեծ բացուածք։ Ուսուրեան երկաթուղագծի վրա խուլիգանները յարձակվել են չինացի ճանապարհորդների վրա. մի քանի չինացիներ վիրաւորված են և կողոպտված. խուլիգաններից երեք բռնվել են։

ՏԱՆԺԷՐ, 25 դեկտ.։ Ի նկատ առնելով Ջէբասի պաշտօնական խնդիրքը, Ֆրանսիացի լէյտենանտ Բիւէերին յանձնարարվել է ընդունել թնդանօթաձիգ զօրքերի հրամանատարութիւնը Ցինատի դէմ։ Բիւէերին Տանժէրից մեկնեց մի թնդանօթով միայն։ Ցինատը գրաւելու մասին ստացած լրացուցիչ տեղեկութիւնների համաձայն, Կաիդի քաղաքը ռմբակոծելուց յետոյ, Բօմաղան դիմել է Ռայսուլի տանը, ճանապարհին կրակ բանալով նրա կողմնակիցների վրա։ Ռայսուլի կողմնակիցները, թւով 100 հոգի, փախել են։ Ապա սուլթանի զօրավարը շտապել է քաղաք և սկսել է կողոպտել ձեռքն ընկածը։ Ռայսուլի տունը այրված է։ Ռայսուլի մօտ գտնվել են 15 գերիներ, որոնց կեանքին վտանգ է սպառնալիս եղել։ Կարծում են, որ Ռայսուլին փախել է Ճէյլս Դէլիաաուրու մօտ։ Սուլթանի զօրքերը բացօդեայ անցնում են Ցենատից վեց կիլօմետր հեռաւորութեան վրա և ոչ մի կորուստ չեն ունեցել։

ԼՕՁ, 25 դեկտեմբերի։ Երէկ երեկոյեան, քաղաքի զանազան տեղերում տեղի ունեցան կուսակցական ընդհարումներ։ 5 բանւոր ծանր վիրաւորված են, մէկը սպանված։ Երէկ երեկոյեան սպանվել է գործարանատէր Շիկէլը անյայտ անձնաւորութեան ձեռքով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 դեկտեմբերի։ Պետերբուրգում եղող սերբական թագաւորական միսսիան խնդրել է «Պետերբուրգի հեռագրական Գործակալութեան», որ նա դիւանագէտ հերքէ վերջին ժամանակներս ռուսաց լրագրերում երևացած և արտասահմանեան լրագիրներից արտատպած այն լուրը, որ իբր Սերբիայի թագաւորի և Կարագէօրգեվիչների ցեղի դէմ դաւադրութիւն է կազմվում։ Սերբական թագաւորական միսսիա լիազօրված է իր կառավարութիւնից վճռականապէս յայտնել, որ այդ բոլոր լուրերը հիմքից միանգամայն զուրկ են։

ԲԱՆԳԿՕԿ, 25 դեկտեմբերի։ Հրդեհը ոչնչացրել է չինական թաղամասը, վնասը հասնում է 10 միլիոն տաէլի։

ՏԱՆԺԷՐ, 25 դեկտեմբերի։ Զինուորական մինիստր Ջէբբասը վարձատրութիւն է խոստացել Ռայսուլի գլխի համար և մտադիր է նրա ճանապարհը կտրել։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏԵԱՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մէզամեռ. հ.։
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներքոդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Յ. Գուրգէնով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհուրդ (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. Ջախարբէգեանց
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՆԵՐՔԻՆ ԵՒ ՋՂԱՅԻՆ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.
Տելեֆօն № 1087
Սօլօլակ, Լերմօնտօվսկայա փող., 16.
(ա. օ.) 77—150

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀՕՒՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեոնովսկի փողոց № 16։
(ու. կ. չ.) 1—20

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մասնագէտ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 10—12, երեկոյեան 6—8։ Կանանց համար 12—1 ժամը։
Սօլօլակ, անկիւն Բէհբութեան և Պասկեվիչի փողոցների, № 33/15։
(ա. օ.) 79—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինովսկայա փողոց № 8.
(ե. հ. չ.) 8—100

Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների համար հարկաւոր է ուսուցչական
ԻՆՍՏԻՏՈՒՏԸ կամ ՍԵՄԻՆԱՐԻԱՆ
աւարտած ռուսաց լեզուի համար
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
շաբաթական 24 դասով
դասագինը 30 ռուբլի
Ռոճիկը կըվճարվի՝ պաշտօնը ստանձնելու օրից։ Դիմել Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների հոգաբարձութեան։
Նախագահ հոգաբարձութեանը՝
Սեդրակ Աղամեանց
Քարտուղար՝ Ճղմաճեանց
ե. հ. չ.) 4—5

Մի չքաւոր ընտանիք,
որը բաղկացած է 7 հոգուց և ապրուստի միջոցներից զուրկ է, խնդրում է բարերարներին օգնել իրան։ Նուէրները ուղարկել հետեւեալ հասցէով. Тифлисъ, Михайловскій пр., № 88. տիկ. Սալամբէգեանին։
1—3

Փանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինի փողոց, վրա № 23, պրոգիմնազիայի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 ռուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Ցարուկեանով
(հ. կ. ե.) 56—100

ՄԻ ՀԱՅ ԳՐԱԳԷՏ,
44 տարեկան, մի քանի լեզուներով խօսող, որոնում է գործակատարի պաշտօն, ամեն տեսակ առևտրական տեղերում և գործարաններում։ Կարող է լինել և ծառայ ընտանիքի գէնտ ընտանիքներում, խմբագրատներում և կրթական հաստատութիւնների մէջ։ Հարցնել՝ Նաւթլուխ, Նաղէժդինսկի պաստանատարան, Գարեգին Տէր-Աւետիքեանին։
4—3

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ
Մաղաք Պետրոսեանի
«Շուշան», «Լիւսի», «Հախիսի», «Պահակը», «Բանւորը», «Մի կտոր հացի համար», «Կապոյտ շալիկը», Արցունքներ», «Վէրա», «Տխուր պատմութիւն»։ Բոլորը մի գրքոյկում 111 երես, գինն է 30 կ.։ Արտատպված «Մուրճից», «Աղբիւրից» և «Ընկերից»։
Վաճառվում է տեղական գրավաճառների մօտ և «Փարոս» պալիրոնում։ Հեղինակի հասցէն՝ Бебутовская № 42. կամ Авчалы з. ж. д.
(չ. չ.) 10—10

„ԳՈՒՏԵՆԲԵՐԳ“
Գրավաճառանոցի հրատարակութիւն
Լոյս տեսաւ Սեդրակ Մանդինեանի կազմած
начальная русская
христоматія
для армянъ
դասաւանդութեան բացատրութիւններով
1. գրքոյկ
Գրքոյկը նոր ծրագրի համեմատ նշանակված է ծխական ուսումնարանների 3-րդ բաժանմունքի համար, բայց առայժմ կարող է գործածվել նաև 4-րդ բաժանմունքում կամ թեմակ. դպրոցի առաջին դասարանում։
3—10

Լոյս տեսան
Մ. ՉԱՐՉԵԱՆԻ
1907 Թ. ՕՐՑՈՅՑՆԵՐԸ
Ցանկացողները՝ աւելի գիջում ստանալու համար դիմեն են հետեւեալ հասցէով. Թիֆլիս, Գարայեվսկի № 5, Մակար Չարչեան։
ե. չ. 15—15

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
1907 Թ.
ՀՈՎԻՒ
Հոգեւոր-բարոյական, հասարակական եւ մանկավարժական շաբաթաթերթ
Հրատարակվում է շաբաթը մի անգամ, կիրակի օրը
(Երկրորդ տարի)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ
Տարեկան . . . . . . 4 ռ.
Կէս տարուանը . . . . 2 ռ. 50 կ.
Ամսական . . . . . . — 50 կ.
Բաժանորդները և ուսուցիչները բաժանորդագինը կարող են վճարել մաս-մաս (2—2 ռ.) երկրորդ վճարը լինելու է Զատկի տօներից յետոյ։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է
Թիֆլիսում՝ խմբագրատանը՝—Большая Ванкская ул., № 16. Կայսրութեան այլ տեղերից՝ պէտք է դիմել Тифлисъ, Редакція «Овивъ»
Արտասահմանից՝ Tiflis, Rèdaction de la revue «Hovive»
Խմբ.-հրատ. Եզնիկ ա. ք. Երզնկեան
(չ.) 2—3

Արդէն թարգմանել եմ
1) Ստ. լը Շարի «Ледоходъ» դրամա 5 գործ.
2) Վասիլեվի, «Что такое отечество».
3) Օ. Միրբօի, «Ժան Ռուլ», դրամա 5 գործ.
4) Ան.-սկի, «Семидесятникъ», պիէս 1 գործ.
Ներկայացման, գնելու կամ հրատարակելու համար դիմել՝ Анапа, Щводу.
Մարտիրոս Տէրոյեան Շուտ
3—5

Սրանով յայտարարում եմ
ի գիտութիւն բոլորի, որ իմ եղբայր ԼԵՒՈՆ Տ.-ՄԱԿԱՐԵԱՆԸ ինձ հետ իր հաշիւները բոլորովին վերջացրել է և ես այլ ևս պատասխանատու չեմ նրա պարտքերին, որը կարող է վերցնել զանազան մարդկանցից։
3—3 Աստուածատուր Տ.-Մակարեան



ա. օ. 5—10

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեքշաբթի, դեկտեմբերի 26-ին
Հայ դրամատիկ ընկերութեան խումբը
Անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար
կը ներկայացնէ
I
ՏՕՆԱԾԱՌ
Կօմեդիա 1 արար., Նեմիրովիչ-Դանչենկօյի, թարգմ. Տ. Յովհաննիսեանի
II
ՖՐԱԿԻ ՇՆՈՐՀԻՒ
Վօգլէլի 1 արար. թարգ. Գր. Աւետեանի
III
ՊԱՇՏՕՆՍ ԽՈՒԸՄՓԱԼ Է
Վօգլէլի 1 արար., Դէննիի, թարգմ. Գր. Աւետեանի
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 7 և կէսին
Տեղերի գները 1 ռուբլուց մինչև 30 կ., հիւրերը անդամների երաշխաւորութեամբ վճարում են ամեն մի տոմսակին 1 ռուբլի աւ։ Աշակերտներին չէ թոյլատրվում։
Ռեժիսոր Յ. Աբէլեան
(կ. ե.) 2—2

Գէորգեան ճեմարանի
Ա. լսարանի
ՄԻ ՈՒՍԱՆՈՂ
(մի տարի ուսուցչութիւն արած) ուսուցչութեան պաշտօն է փնտռում հայոց դպրոցներում։ Դիմել՝ Эчміадзинъ, Академія Потеянцу.
4—5

Ֆինանսների նախարարութեան խրախուսութեան տակ գտնւող
ՀԱՇՈՒԵՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ
Հեղինակ «Առևտրական, գործարանական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնասիրական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում։
ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ
Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4 ամսում։
Ներկայ տարվայ կուրսերում բացի սովորական մասնագիտական առարկաներից աւանդվելու է ձրիաբար քաղաքական տնտեսութիւն (политическая экономія) և որոշ վճարով կամաւոր ուղագրութիւն (стеографія)։
Ընդունելութիւնն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան և 9-ից մինչև 11-ը առաւօտեան։ Պարապմունքները սկսվելու են յունվարի 15-ից, 1907 թ. պարբերական ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։
Դասընթացը աւարտողներին տրվում են ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատտեստատներ։
Դրանից անկախ, բացված է ֆիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։
Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին Թիֆլիսում Н.В. Абраамяну, Николаевская ул. № 22, ամենայն օր։
Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։
Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին առանց պօստի ծախս վճարելու. Գինն է 3 ռ. 50 կոպէկ։ (հ. կ. ե.) 9—20

3 ՌՈՒԲԼԻ 3 ՌՈՒԲԼԻ
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՈԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ“
գունաւոր պատկերի երկրորդ էժանագին հրատարակութիւնը
որի միակ նպատակն է հնարաւորութիւն տալ իւրաքանչիւր հայի ունենալ այդ ազգային նուիրական յիշատակը
Գինն է 3 ռուբլի ճանապարհածախսով
Ինձ մօտ վաճառվում է նոյնպէս ոսկուց եւ արծաթից շինված
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐՈՇՄԸ
որպէս զարդ ժամացոյցի շղթայից կախելու համար և որպէս բրօշկա կանանց սեռի համար
Գինն է ոսկուց 15 ռուբլի եւ արծաթից 3 ռուբլի ճանապարհածախսով
ռանց կանխավճարի չէ ուղարկվում
(կ. ե. հ.) Դիմել՝ Тифлисъ, Веляминовская 24, В. Варданяну. 5—10
3 ՌՈՒԲԼԻ 3 ՌՈՒԲԼԻ

թիւն դարձրէք գործարանի դրոշմի վրա „Пишущій Амуръ“.
Օգտակար ընծայ առաջիկայ տօներին
ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՊԱՀԵՍՏ
ԳՐԱՄՄՕՖՕՆՆԵՐԻ
ԵՒ
ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԻ
ԱՄԲՈՂՋ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ
Ստացված են մեծ թւով ամենավերջին նորութիւնների պլաստինկաներ, զանազան լեզուներով։
ԳՆԵՐԸ ԱՐԺԱՆ ԵՆ
Պատկերազարդ կատալօգները և պիեսների ցուցակները ուղարկվում և տրվում են ձրի։

TRADE MARK
GRAMMOPHON

ԳՈՐԾ. ԴՐՈՇՄ
„ԳՐԱՄՄՕՖՕՆ“
Ակցիօներական ընկերութեան
Թիֆլիսի բաժանմունք
Թիֆլիս, Գօլօվինսկի պրօսպեկտ, տ. № 9.
(չ. չ.) Հեռագրի համար հասցէն՝ Тифлисъ "Граммокомпанія„. 11—25
Ապարատներ եւ պլաստինկաներ գնելիս ուշադրութիւն դարձրէք գործարանի դրոշմի վրա „Пишущій Амуръ“

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатная, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5